Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.842

Ստ.Գ.IV.1290

№ 23 Գրադարան «Յառաջ»-ի № 23

Ա. ՆԻԿՈԼԱԵՎ

ԿՕՕՊԵՐԱՑԻԱ

Թարգմ. ռուս. Յ. Թ.

ԳԻՆԸ 15 կ.

ԹԻՖԼԻՍ
1906

334
Ն-70

Арм.
3-2719а
05 JAN 2010

334
Հ-70
3-2719а

Ա. ՀԻԿՕԼԱՅԵՒ.

ԿՕՊԵՐԱՏԻՒ

Թարգմ. ռուս. Յ. Թ.

Инв. №21860

ԹԻՖԼԻՍ
1906

11.07.2013
25.842

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտրատարաց Տպարան «ՀԵՐՄԵՍ» Ընկ. Մագաբեան փողոց. № 5

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅ ՍՍՀ
Ա. Մասիսյանի անվան
39505-63

ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԻՒՆ

I

Երկար ժամանակ մարդիկ չէին էլ ենթադրում, թէ որքան մեծ նշանակութիւն ունի փոխադարձ օգնութիւնը կենդանիների աշխարհում։ Թւում էր, թէ կենդանիները մշտական ու անընդհատ կռիւ են մղում իրար դէմ, և թէ այդ կռիւը անազորոյն ու անողոք է։ Նոյն իսկ աւելին. շատ գիտնականներ պնդում էին, որ հէնց այդ կռուի, այդ փոխադարձ ոչնչացման շնորհիւ է, որ մեր աշխարհը կատարելագործւում է. թոյլերը ոչնչանում են, իսկ ուժեղները ապրում են ու առաջ բերում աւելի ամրակազմ, աւելի կենսունակ երիտասարդ սերունդ։

Սակայն բոլոր այդ հայեացքները սխալ դուրս եկան, հէնց որ գիտութեան մարդիկ աւելի մօտիկ և աւելի հիմնաւոր կերպով ծանօթացան կենդանիների կեանքի հետ։ Արդարև. կենդանիների մէջ յամառ և եռանդուն կռիւ է մղւում։ Իզուր չէ, որ կենդանիների աշխարհում մենք տեսնում են յարձակման ու պաշտպանութեան բազմազան գործիքների այնպիսի առատութիւն, ինչպէս են՝ ահագին ժանիքները, սուր ճիրանները, ամուր կտուցները, թունաւոր ատամները, կարծր զրահները և այլն, և այլն։ Բայց միայն կռիւը չէ, որ գոյութիւն ունի... Նման տեսակի կենդանիների մէջ կռիւը, ընդհակառակը, պատահում է համեմատաբար սակաւ. դրանց մէջ գերիշխում է փոխադարձ օգնութիւնը, փոխադարձ պաշտպանութիւնը, զանա-

զան գործեր միահամուռ ոյժերով տանելը, կամ ուրիշ խօսքով՝ աշխատակցութիւնը, իսկ գործածելով օտար բառ՝ կօօպերացիան։

Վերցնենք մի քանի օրինակ։

Երբ խօսք է գալիս փոխադարձ օգնութեան մասին կենդանիների աշխարհում, անշուշտ, չէ կարելի չը յիշել մրջիւններին։ Եւ յիրաւի. բնութիւնը կարծես, դիտմամբ է թողել նրանց անպաշտպան, դիտմամբ է նրանց թշնամիների յարձակումների համար նկատելի դարձրել։ Այսպէս, նրանց մարմնի գոյնը այնքան նկատելի է, որ ակամայ աչքի է ընկնում. նրանց մարմինը կարծր զրահով չէ պաշտպանուած. նրանց ձուիկներին ու թրթուրներին սիրահար են բազմաթիւ անասուններ ու թռչուններ, որոնք բնակւում են անտառներում ու մարգերում։ Իւրաքանչիւր մրջիւն մի թոյլ էակ է, որ չունի նոյն իսկ զօրեղ թոյն կամ վտանգաւոր խայթոց, նրանց բարձր շինութիւնները անմիջապէս աչքի են ընկնում ամեն տեղ. որտեղ որ կառուցւում են։ Այդպիսի պայմաններում, թւում է, որ միայն ծոյլը չի նեղացնիլ նրանց և, իսկապէս, մրջիւնների ամբողջ ցեղը վաղուց արդէն դատապարտուած կը լիներ կատարեալ բնաջնջման, եթէ կենդանիների մէջ իշխեր միայն կռիւը։ Մինչդեռ, իրապէս, բոլորովին հակառակն է տեղի ունենում։ Նրանցից ամեն տեղ երկիւղ են կրում ու խուսափում են նոյնիսկ, այնպիսի միջատներ որոնք օժտուած են անհամեմատ աւելի մեծ ոյժով։

Երբ Ֆօրէլը—բնութեան ամենաականաւոր ուսումասիրողներից մէկը — թափեց մի քսակ մրջիւններ մարգագետնի վրայ, նկատեց, ինչպէս ճպուռները վազ է վազ ընկան այս ու այն կողմ, թողնելով մրջիւններին թալանելու իրանց բները. ծղրիդները ցրուեցին զանազան ուղղութիւններով, իսկ սարդերն ու բզէզները դէն ձգեցին իրանց աւարը, որպէս զի իրանք մրջիւնների աւարը չը դառնան». սրանք նոյն իսկ կրեատների բները խլեցին կռուով, որի ժամանակ շատերը զոհուեցին համայնքի բարօրութեան համար։ Մրջիւններից չը կարողացան ազատուել նոյն իսկ աւելի արագաշարժ միջատները։ Ֆօրէլը յաճախ տեսել է, ինչպէս մրջիւնները բռնում ու խեղդում էին թիթեռներին, մոծակներին, ճանճերին և այլն։

Բայց ինչումն է այդ իսկապէս անզօր ու անպաշտպան էակների ոյժը։ Բացառապէս և միմիայն նրանց ընդունակութեան մէջ՝ պաշտպանելու միմեանց, օգնելու իրար, գործը միահամուռ ոյժերով վարելու, մի խօքով՝ աշխատակցութեան, կօօպերացիայի ընդունակութեան մէջ...

Կօպերացիայի ընդունակութիւնն է, որ դարձրել է մրջիւններին ոչ միայն ուժեղ ու վտանգաւոր, այլ և հնարաւորութիւն է տուել նրանց հասնելու իրանց կեանքի մէջ ամենամեծ բարեկեցութեան։ Նրանք գիտեն ընդհանուր ոյժերով կառուցանել վիթխարի շինութիւններ, որոնք ապշեցնում են ամեն մէկին, ով դիտել է նրանց դահլիճները, նրբանցքները, ամբարանոցները, նկուղները. նրանք անց են կացնում խճուղիներ ու ծածկած գալերէյներ, հնձում են իրանց հերկած ու ցանած արտերը, կերակրում են իրանց կովերի՝ խոտի ափիսների ամբողջ հօտերը։ *) Բայց դա էլ դեռ քիչ է։ Աշխատակցութեան, կօօպերացիայի այդ ընդունակութիւնը, այդ անդրդուելի հակումը՝ լինել միշտ միասին և ամեն ինչ միահամուռ ոյժերով անել՝ զարգացրել են մրջիւնների մտաւոր ընդու-

*) Այստեղ խօսքը վերաբերում է գլխաւորապէս հարաւային մրջիւնների բազմաթիւ տեսակներին։ Բոլոր այս տեղեկութիւնները ստուգած են ամենամանրակրկիտ կերպով բազմաթիւ ականաւոր գիտնականների կողմից։

նակութիւնները. այդ փոքրիկ էակները զարմանք են պատճառում դիտողին իրանց հմուտութեամբ՝ խելացի կերպով կատարել ամեն մի նոր գործ, ճարպիկութեամբ դուրս պրծնել իւրաքանչիւր յանկարծակի վրայ հասած դժուարութիւնից։ Մրջիւնի ուղեղը—հռչակաւոր գիտնական Դարվինի ասելով—աշխարհիս ամենանշանաւոր հրաշալիքներից մէկն է, թերևս, աւելի նշանաւոր հրաշալիք, քան մարդու ուղեղը...

Եւ այս ամենը առաջացել է, գլխաւորապէս, շնորհիւ փոխադարձ օգնութեան, աշխատակցութեան, կոոպերացիայի, որ խիստ զարգացած է մրջիւնների կեանքի մէջ։

Բայց մենք արդէն ասացինք, որ կոոպերացիան գոյութիւն ունի ամենուրեք կենդանիների աշխարհում և ոչ միայն մրջիւնների մէջ։ Կան կենդանիներ, որոնք հօտեր են կազմում, որպէս զի ապահովեն իրանց որսի յաջողութիւնը. մի ուրիշները ապրում են ահագին խմբերով, որպէս զի կարողանան յաղթական կռիւ մղել ուժեղ ու դաժան գիշատիչների դէմ. կան այնպիսի կենդանիներ էլ, որոնք միասին են սնուցանում ու դաստիարակում իրանց ձագերին, կամ կազմում են ահագին խմբեր հեռաւոր ճանապարհորդութիւններ կատարելու համար. վերջապէս, կան թռչուններ, որոնք, անցնելով տասնեակ ու նոյն իսկ հարիւրաւոր վերստեր, ժողովւում են մի տեղում, որպէս զի օրական գոնէ մի քանի ժամ անցկացնեն իրանց նմանների հասարակութեան շրջանում։ Մենք կարող էինք այստեղ թուել ամենամանրակրկիտ կերպով ստուգած բազմաթիւ օրինակներ, սակայն դրա համար բաւականաչափ տեղ չունենք. մենք միայն կը կրկնենք ժամանակակից հռչակաւոր գիտնականներից մէկի խօսքերը՝ որ փոխադարձ օգնութիւնը, աշխատակցութիւնը, կոոպերացիան հանդիսանում են մի անհրաժեշտ պայման իւրաքանչիւր կենդանի ու մտածող էակի կեանքի համար, և

առանց դրան կենդանիների կեանքը երբէք չէր հասնիլ այն բազմատեսակութեան, այն զօրութեան, այն բարգաւաճման, որին նա այժմ հասել է։

II

Բայց եթէ կենդանիները իրանց համեմատաբար պարզ կեանքի մէջ ստիպւած են դիմելու փոխադարձ օգնութեան ու կոոպերացիայի, մարդիկ, ի հարկէ, բոլորովին անկարող կը լինէին ապրել, եթէ մշտապէս չօգնէին իրար, չը մտնէին փոխադարձ գործակցութեան մէջ, չը դիմէին կոոպերացիայի։ Չէ՞ որ մարդ անկարող է կենդանիների նման արագ վազել, չունի ուժեղ ժանիքներ, սուր ճիրաններ և ոչ էլ՝ այնչափ մեծ ֆիզիքական ոյժ, որչափ միւս կենդանիները, որոնք հասակով մարդու չափ են։ Իսկ չէ՞ որ կար ժամանակ, երբ մարդն ապրում էր որջերում, հագնում էր գազանների մորթեր, չունէր ոչ հրացան, ոչ դանակ, ոչ էլ առհասարակ մի որևէ զէնք, որով այժմ նա այնքան դիւրին կերպով յաղթահարում է ամենասոսկալի գազաններին։ Այն ժամանակ մարդը կանգնած էր դէմ առ դէմ կենդանիների աշխարհին և հետևութեամբ կոչնչանար, եթէ հրաժարւէր փոխադարձ օգնութիւնից, աշխատակցութիւնից։

Եւ յիրաւի. գիտութիւնը կարողացաւ ցոյց տալ, որ նոյն իսկ հինաւուրց ժամանակներում մարդը մենակ չէ ապրել, այլ հասարակութեան մէջ. իսկ չէ՞ որ ոչ մի հասարակական կեանք հնարաւոր չէ առանց փոխադարձ օգնութեան, առանց աշխատակցութեան։ Հէնց այն ցեղերի օրինակից, որոնք մինչև այսօր էլ մնացել են վայրենի, կարելի է համոզւել, որ ամենաթշւառ վայրենիների մօտ անգամ մենք հանդիպում ենք փոխադարձ օգնութեան, կոոպերացիայի։

Վերցնենք մի քանի օրինակ։

Ամենաողորմելի վայրենի ցեղերից մէկը համարւում են բուշմէնները։ Բայց ահա թէ ինչ են պատմում նրանց մասին բարեխիղճ ու կրթւած ճանապարհորդները։ Բուշմէնները որսի են գնում միշտ միասին, և որսը բաժանում են իրանց մէջ առանց գժտութիւնների. նրանք երբէք առանց հոգատարութեան չեն թողնում իրանց վիրաւորներին և արտայայտում են ջերմ կապ դէպի իրանց ցեղակիցները։ Ճանապարհորդ Լիխտենշտայնը տեսել է, ինչպէս բուշմէնները ազատում էին իրանց խեղդւողընկերոջը։ Մեծ դժւարութեամբ հասցնելով նրան ափը, բուշմէնները հանեցին իրանց վրայից գազանների մորթերը և ծածկեցին նրա մարմինը, թէև իրանք միևնոյն ժամանակ ցրտից դողում էին. ապա սկսեցին մարմինը շփել ու տաքացնել կրակի առաջ, մինչև որ ուշքի բերին։

Նոյն կերպով են նկարագրում և հոտենթոտների կեանքը։ Սրանք ևս կանգնած են զարգացման ամենատորին աստիճանի վրայ։ Յայտնի գիտնական Լեոբբոկը նկարագրում է նրանց իբրև «ամենակեղտոտ անասունների», և նրանք, իսկապէս, շատ կեղտոտ են։ Անասունների մորթը, որ կախ է ընկած նրանց վզից և որը կրում են այնքան ժամանակ, մինչև որ ցնցոտի է դառնում, կազմում է նրանց միակ հագուստը։ Նրանց խրճիթները շինւած են մի քանի ձողերից, ծածկւած խոտերով և զուրկ որև է կահկարասիքից։ Հոտենթոտները թէև ունեն ընտանի կենդանիներ՝ եզներ ու ոչխարներ, և ծանօթ էին երկաթի գործածութեան հետ դեռ եւրոպացիների գալուց առաջ, այնուամենայնիւ կանգնած են զարգացման ամենատորին աստիճանի վրայ։ Չընայած դրան, ով հոտենթոտների հետ շփւել է, զովել է նրանց համայնատէր ընտանեւորութիւնը, նրանց պատրաստականութիւնը օգնել միմեանց։ Տւէք հոտենթոտին մի բան, և նա անմիջապէս կը բաժանի այդ բոլոր ներկայ եղողների մէջ... Բայց այս սովորութիւնը նկատւում է ոչ միայն հոտենթոտների այլ համարեա բոլոր վայրենի ցեղերի մէջ...

Նոյնանման վկայութիւններ, որ փոխադարձ օգնութիւնն ու աշխատակցութիւնը գոյութիւն ունեն ամենավայրենի մարդկանց մէջ, կարելի էր առաջ բերել կրկին մեծ թւով։ Բոլոր այդ վկայութիւնները ցոյց են տալիս, որ մարդիկ միշտ աշխատել են միմեանց, որ նրանք բազմազան գործեր միշտ կատարել են ընդհանուր ոյժերով, այսինքն, ուրիշ խօսքով, միշտ դիմել են աշխատակցութեան, կոոպերացիայի։

Այսպէս է եղել միշտ. այսպէս է և այժմ։ Իւրաքանչիւր ոք, որ ծանօթ է հասարակութեան չքաւոր խաւերի կենցաղին, գիտէ, թէ որչափ բազմատեսակ ծառայութիւններ են մշտապէս մատուցանում միմեանց չքաւորները։ Ահա, օրինակի համար, ինչ է գրում մի կին—բժիշկ քաղաքի աղքատ թաղերում ապրող մայրերի մասին։ «Դուք չէք կարող երևակայել, թէ ինչքան շատ են նրանք իրար օգնում։ Եթէ մի կին ոչինչ չէ պատրաստել կամ չէ կարողանում մի բան պատրաստել իր նորածին երեխայի համար—իսկ այդ որքան յաճախ է պատահում—հարևաններից իւրաքանչիւրը մի բան է բերում նորածնի համար։ Բացի այդ, հարևան կանանցից մէկը խնամում է միւս երեխաներին, երկրորդը իր վրայ է առնում տան անտեսութեան հոգսը, մինչև որ մայրը պառկած է... Բանւոր դասակարգի մէջ շատ յաճախ կարելի է տեսնել, ինչպէս մի ընտանիք պահում, հսկում է ուրիշի երեխաներին, որովհետև նրանց ծնողները հիւանդացել են։ Կանայք նոյն տեսակ օգնութիւն են ցոյց տալիս, երբ հարևանուհին ստիպւած է դրսի աշխատանքի գնալու, թողնելով տանը իր փոքրիկ մանկան։ Եթէ բանւորները չօգնէին իրար, նրանք ուղղակի չէին կարող ապրել։ Ես ճանաչում եմ ընտանիքներ, որոնք շարունակ օգնում են

իրար փողով, կերակրով, փայտով, խնամելով փոքր երեխաներին հիւանդութեան կամ ծնողներիմահուան դէպքերում»։

Այս համոզմունքին են գալիս ամենքը, ով ապրել է աղքատների շրջանում, ով ծանօթ է բանւորների, գիւղացիների, մանր արհեստաւորների կեանքի հետ։ Փոխադարձ օգնութեան ու աշխատակցութեան այս սովորութիւնը մըշակւում է հետզհետէ և աննկատելի կերպով մանկական հասակից։ «Եթէ վերցնելու լինենք, օրինակի համար, չքաւոր ընտանիքների երեխաներին, երբ նրանք խաղում են փողոցում կամ եկեղեցու գաւթում, կամ մարգագետնի վրայ դուք անմիջապէս կը նկատէք, որ նրանք կազմում են իրանց մէջ սերտ միութիւն, չը նայած բոլոր ժամանակաւոր վէճերին, որ տեղի են ունենում նրանց մէջ. դուք կը տեսնէք, որ այդ միութիւնը պաշտպանում է նրանց ամեն տեսակ դժբախտութիւններից... «Մի մօտեցիր առւին», «մի կեր այդ պտուղները, դրանք թունաւոր են, կը մեռնես»։ Ահա այն առաջին դասերը, որ տրւում են փոքրիկին, երբ նա մտնում է իր փողոցային ընկերների շրջանը։ Քանի քանի երեխաներ, որոնք խաղում են փողոցներում, գետերի ու վտակների ափերում, մահւան գոհ կը դառնային, ընկնելով սայլերի անիւների տակ կամ պղտոր ջրերը, եթէ նրանց մէջ չը լինէր այդ տեսակ փոխադարձ օգնութիւն։ Իսկ երբ փոքրիկ կարմրաթշիկ Մարիամիկը վերջ ի վերջոյ ջուրն է ընկնում, մատաղ ձագուկը այնպիսի աղաղակ է բարձրացնում, որ հարևանները շտապով հաւաքւում են և շուտափոյթ օգնութիւն հասցնում»*)...

Մի խօսքով, մարդն իր մանկական հասակից սկսած մինչև ծերութեան ամենավերջին օրերը չէ կարող ապրել առանց փոխադարձ օգնութեան, առանց աշխատակցութեան ուրիշ մարդկանց հետ։ Եւ որքան աւելի է բարդանում մարդկութեան կեանքը, այնքան աւելի ուժեղ կերպով է զգացւում փոխադարձ օգնութեան, աշխատակցութեան պահանջը։ Ահա թէ ինչու մենք տեսնում ենք հարուստ ու կրթւած ժողովուրդների մէջ բազմաթիւ ամեն տեսակի ընկերութիւններ, որոնք կազմւած են զանազան նպատակներով։ Կան ընկերութիւններ, որոնք ընդհանուր ոյժերով ուսումնասիրում են այս կամ այն գիտութիւնը. կան ընկերութիւններ, որոնք հոգ են տանում կրթութիւն տարածելու և այդ նպատակով ուսումնարաններ են շինում, թանգարաններ են բաց անում, գրքեր ու լրագիրներ են հրատարակում ու տարածում. կան ընկերութիւններ, որոնք կազմւում են նրա համար, որ անդամներին հնարաւորութիւն տան անցկացնելու իրանց ազատ ժամանակը հաճելի ու օգտակար կերպով, և այդ նպատակով զբօսանքներ են սարքում փոքր ի շատէ հեռաւոր յայտնի տեղեր այցելելու համար. վարձում են մարգագետիններ ու արձակ վայրեր, որտեղ ստեղծում են ամեն տեսակ յարմարութիւններ խաղերի ու մարզութիւնների համար ազատ օդում, կամ թէ յատուկ ակումբներ են բաց անում շախմատախաղ, կամ հեծելանիւով զբօսանք, կամ թէ նաւակների մրցութիւն սիրողների համար. կան, վերջապէս, ընկերութիւններ, որոնք հոգ են տանում իրանց անդամների տնտեսական դրութեան բարգաւաճման մասին. այսպէս, նրանք հնարաւորութիւն են տալիս գնելու էժան գներով լաւ մթերքներ, միւս կողմից էլ՝ ծախել իրանց ապրանքներն աւելի ձեռնտու պայմաններով, կամ աշխատում են իրանց անդամների համար ունեալ մշտապէս էժան ու յարմար վարկ, կամ թէ աջակցում են ձեռնարկելու մի որև է գործի միահմուռ ոյժերով։

Բոլոր այդօրինակ ընկերութիւնները կազմւում են

*) Кр—инъ... «Взаимопомощь», էջ. 200.

փոխադարձ օգնութեան ու աշխատակցութեան հիմունքների վրայ։ Ուրեմն, դրանք ամենքը հետամուտ են լինում կոօպերացիայի նպատակներին, ուստի և կարելի է դրանց ասել կոօպերատիւ ընկերութիւններ։

Բայց այստեղ խօսք կը լինի ոչ բոլոր կոօպերատիւ ընկերութիւնների մասին, այլ միայն այնպիսիների, որոնք հետամուտ են լինում իրանց անդամների substանական բարգաւաճմանը։ Այդ տեսակի կոօպերացիան չափազանց կարևոր է ռուսական կեանքի համար ներկայ մոմէնտում։

ԿՕՕՊԵՐԱՑԻԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՕՊԱՅՈՒՄ

I

Թէ որպիսի մեծ այժ է ներկայացնում լաւ հիմունքների վրայ դրուած կոօպերացիան և ինչքան մեծ օգուտներ է բերում նա ժողովրդին՝ կարելի է հեշտութեամբ համոզուել աւելի հարուստ ու լուսաւորուած պետութիւնների տուած փորձերից։ Մենք առաջ կը բերենք այստեղ մի շարք տեղեկութիւններ եւրօպական մի քանի պետութիւններում գոյութիւն ունեցող կոօպերացիաների մասին։

Ամենից առաջ սկսենք Անգլիայից, որտեղ կոօպերատիւ շարժումը խիստ զարգացել է վերջին յիսուն տարուայ ընթացքում։

Ամեն տարի ամառուայ կիսին, երբ Լօնդօնից ամառանոց են գնում, ովքեր հնարաւորութիւն ունեն, Անգլիայի մայրաքաղաքը մի քանի օրով աղմկալի կենդանութիւն է ստանում շնորհիւ չափազանց հետաքրքիր այցելուների։ «Նրանց, ասում է անգլիացիների կեան-

քին լաւ ծանօթ պ. Դիօնէօն,—բերում են Անգլիայի բոլոր ծայրերից երկաթուղու գիշերայ գնացքները։ Դրանց մէջ կան սպիտակ ալիքներով ծերունիներ և կարմրաթուշ, առողջակազմ երիտասարդներ իրանց լայն թիկունքներով ու ապշեցուցիչ մեծութեամբ բռունցքներով. կան նաև աղջիկներ ու երեխաներ։ Ամենքը ոտն օրուայ նման գեղեցիկ հագնուած են. շատերի ձեռքին կան ծաղկի փնջեր. ամենքի դէմքերը սպասողական արտայայտութիւն ունեն. կարծես, ակնկալում մի ինչ որ լաւ բանի։ Գիշերուայ ժամը 2-ին, երբ հսկայական քաղաքի քնաթաթախ փողոցներում սովորաբար միայնակ թափառում է շրջմոլիկը կամ ոստիկանը,—մայթերի վրայ նկատւում է մեծ կենդանութիւն։ Ճանապարհորդները խումբ-խումբ դուրս են գալիս զանազան կողմերից, հանդիպում իրար, խառնւում ու կազմում մի վիթխարի կենդանի ալիք, որ շարժուն է, ինչպէս սնդիկ և կենսուրախ, ինչպէս արտուտների երամ։ Ծիծաղը, զուարճալի հանաքները ու երբեմն հնչող երգերը դղրդեցնում են քնաթաթախ օդը։ Ահագին, հազարաւոր ամբոխը շրջում է քաղաքի բոլոր գլխաւոր փողոցները, իսկ առաւօտեան ժամը 9-ին կենդանի առուակի նման թափւում է սանդուխքներով ստորերկրեայ կայարանը. այստեղից ամեն 10 րոպէն յատուկ գնացքներ են մեկնում, որոնք հազիւ կարողանում են բոլոր ճանապարհորդներին տեղաւորել։ Անքուն գիշերը բոլորովին չէ պակասեցրել ուրախութիւնը...

«Ովքե՞ր են այդ ուրախ այցելուները. դրանք կոօպերատօրներն են հաւաքւել եկել Անգլիայի բոլոր ծայրերից իրանց տօնին, որ կատարում են շատ տարիների ընթացքում Բիւրեղային Պալատում»։

Բիւրեղային Պալատում, Լօնդօնի ամենահոյակապ շինութիւններից մէկում, կոօպերատիւ ընկերութիւնները ցուցահանդէս են սարքել այն ապրանքների, որ արդիւ-

նաբերում են իրանց գործարաններում։ Ահա դանակներ, որ պատրաստում են Շէֆֆիլդի կոօպերացիաները. երկաթէ թիթեղից շինած իրեր, որ արտահանում են Բիրմինգէմի կոօպերատիւ ընկերութիւնների բանուորները. կոշիկներ, որ կարում են Նեռերինգի կոօպերատորները. շորեր, որ պատրաստում են Լէյստերի կոօպերատիւ ընկերութիւնները։ Ահա և մի ամբողջ դահլիճ, լցուած չարխերով, որոնք սուլելով պտտւում են էլեքտրականութեան միջոցով. ահա և բազմաթիւ մեքենաների լծակներ, որ աղմկելով բանում են. այդ ամենը դարձեալ պատկանում է կոօպերատիւ ընկերութիւններին։ Ահա և մի ընդարձակ շինութիւն, որ բռնել է Մանչէստրի տպարանական գործիչների կոօպերատիւ ընկերութիւնը. այստեղ դուք կը տեսնէք բրօշիւրներ, գրքեր, ամսագիրներ, որ տպագրել են կոօպերատորները. այստեղ ձեզ ցոյց կըտան մի քանի գրքեր, որոնք գրուած, տպուած, պատկերներով զարդարուած ու կազմուած են գանազան կոօպերատիւ ընկերութիւնների անդամների աջակցութեամբ։ Ահա վերջապէս, ահագին յասպեայ տախտակներ, որոնք կոօպերատորների աշխատանքով են արդիւնաբերուած կոօպերատիւ ընկերութիւնների քարահանքներում. դա անգլիական կոօպերատիւ ընկերութիւնների ամենանշանաւոր ձեռնարկներից մէկն է։ Բանը նրանումն է, որ մի լորդ՝ Պէնրիկ անունով, ունէր ահագին յասպեայ հանքեր և չէր ուզում ոչ մի դէպքում զիջել բանուորների պահանջներին՝ բարւոքել նրանց դրութիւնը։ Սկսեց գործադուլ, որ և տևեց երկար տարիներ. բանուորներին այդ գործադուլը շատ թանգ էր նստում, սակայն նրանք հաստատ հաւատում էին իրանց պահանջների արդարութեանը, ուստի և ոչ մի դէպքում չուզեցին յետ կանգնել պահանջներից։

Այդ ժամանակ Անգլիայի բանուորական միութիւնները, որոնք շատ օգնում էին գործադուլաւոր-քարհատներին, որոշեցին, որ իրանց համար աւելի շահաւէտ կը լինի ձեռք բերել մի քանի յասպեայ հանքեր և այնտեղ տեղ տալ այն բոլոր բանուորներին, որոնք չէին ուզում գնալ լորդ Պէնրիկի մօտ աշխատելու։ Այդպէս էլ արեցին։ Ի հարկէ, այդպիսի յասպեայ հանքեր գնելն ու կարգի բերելը պահանջում էր մեծ գումարներ, սակայն անգլիական կոօպերացիաների մօտ գտնուեցին այդ միջոցները։ Եւ ահա կոօպերատորների 1903 թուականի ցուցահանդիսին առաջին անգամ հանդէս էին բերուած Բիւրեղային Պալատում յասպեայ տախտակներ, որ արդիւնաբերել էին կոօպերատորները իրանց սեփական յասպեայ հանքերում։ Այդ ժամանակ կոօպերացիաներն ունէին արդէն երեք սեփական յասպեայ հանքեր։

Բիւրեղային Պալատի շուրջը ձգուած է փոքրիկ մարգագետին. նրա մի կողմում, վրանի տակ սարքուած է ծաղիկների ընդարձակ ցուցահանդէս։ Այստեղ ցոյց են դրուած կրկին կոօպերատորների ձեռքով իրանց փոքրիկ պարտէզներում բուսցրած ծաղիկներ։ «Այցելուներն անցնում են ու զմայլւում, պատմում է նոյն հեղինակը, այդտեղ ցոյց դրուած ահագին դդումներով, հսկայական գազարով ու վիթխարի կաղամբով։ Այդ բոլոր բանջարեղէնները բուսել են Շօտլանդիայի կոօպերատիւ ընկերութիւնների ագարակներում։ Դուրսը պատշգամբում հնչում են պղնձէ փողերը, ճչում սրինգները, իսկ կոօպերատորների երեխաները անվերջ շարքերով հանդիսաւոր կերպով անցնում են առջևից... սրանք էլ ունեն իրանց սեփական միութիւնը, գիլդիան։ Մարգագետնի վրայ տեղի են ունենում տեսակ-տեսակ մրցութիւններ՝ երեխաները մրցարշաւ են սարքում, ցատկոտում են թոկերի վրայից և այլն։ Մօտենում է ցերեկուայ ժամը երեքը, և ամենքը կրկին շտապում են դէպի Պալատը, դէպի թատրոն՝ լսելու հռչակաւոր երգեցիկ

խումբը, որ բաղկացած է 7000 հոգուց։ Խումբը կազմված է, ի հարկէ, սիրողներից։ Ամենքն էլ կոօպերատորներ են, գանազան «գիլդիաների» անդամներ, որոնք հէնց նոյն օրն առաւօտեան են ժողովւել Անգլիայի բոլոր ծայրերից։ Իւրաքանչիւր գիլդիա ունի իր երգեցիկ խումբը։ Երգեցողութիւնը նրանք սովորել են իրանց ակումբներում, երեկոները, աշխատանքից յետոյ։ Այդ վիթխարի երգեցիկ խումբը ուժեղ տպաւորութիւն է գործում թէ գեղեցիկ ձայներով և թէ ներդաշնակութեամբ... Հանդէսը վերջանում է, երեկոյեան շատ ուշ, պարերով ու հրվառութեամբ մարգարէների վրայ»։

Անգլիական կոօպերատիւ ընկերութիւնների այդ տօնից արդէն կարելի է պարզ տեսնել, թէ որպիսի մեծ ոյժ են ներկայացնում կոօպերատիւ ընկերութիւնները Անգլիայում։ Եւ յիրաւի, «Կոօպերատորների Միութիւնը» դեռ 1903 թ. ունէր 1462 սպառողական ընկերութիւն 1,793-770 անդամով։

Միութիւնը 1902 թ. ստացել է զուտ արդիւնք 82,-652,760 ռուբլի։ Այդ կոօպերացիաների անդամների ճնշող մեծամասնութիւնը հասարակ բանւորներ են։ Յիշեալ 82 միլլիոն ռուբլին մնացել է կոօպերատիւ ընկերութիւնների ձեռքին, ուրեմն՝ իրանց բանւորների ձեռքին։ Ամբողջ գումարը գործադրւած է բանւորների գործի ու կենցաղի բարելաւման վրայ։ Եթէ այստեղ կոօպերատիւ ընկերութիւններ չը լինէին, այդ արդիւնքը կը հասնէր հարուստ գործարանատէրերին և առևտրականներին։ Ահա թէ որքան խոշոր, զուտ տնտեսական օգուտ են բերում անգլիական կոօպերացիաները բանւոր մարդկանց։

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ անգլիացի գործարանատէրերն ու վաճառականները չէին կարող հանգիստ սրտով նայել, թէ ինչպէս է աճում կոօպերատիւ շարժումը։ Նրանք փորձեցին մաքառել դրա դէմ։ Պայմանաւորւեցին

միեանց հետ՝ չընդունել այլևս իրանց գործարաններում կոօպերատիւ ընկերութիւնների անդամներին, չը տալ նրանց բնակարաններ և այլն։ Սակայն կոօպերատորները անձնատուր չեղան. նրանք իրանց միջոցներից յատկացրին մի միլլիոն ռուբլի գործարանատէրերի ու վաճառականների դէմ սկսած կռւի կազմակերպութեան համար, և յաղթանակը վերջ ի վերջոյ մնաց կոօպերատիւ ընկերութիւնների կողմը։

II

Անգլիայի համարեա հանդէպ, այնտեղ, ուր անձուկ նեղուցը բաժանում է անգլիական կղզիները Եւրոպայի մայրցամաքից, գտնւում է մի փոքրիկ պետութիւն՝ Բէլգիան։

Բէլգիական թագաւորութիւնը նոյնպէս հռչակւած է իր կոօպերատիւ ընկերութիւններով, ինչպէս արդիւնաբերող, նոյնպէս և սպառող, այսինքն՝ այնպիսի ընկերութիւններով, որոնք պատրաստում են գանազան ապրանքներ, կամ աջակցում են անդամներին ձեռք բերելու էժան գներով լաւ ապրանքներ։

Ներկայումս բէլգիական բանւորները ունեն 223 կոօպերացիա, որոնցից 25-ը արդիւնաբերող են, իսկ 198-ը սպառող։ Այդ սպառողական ընկերութիւններից օգտւում են տարեկան 520,000 մարդ, որ կազմում է ամբողջ ազգաբնակութեան $^1/_{12}$ մասը։ Այդ ընկերութիւնների անդամների թիւը 100,000 հոգուց էլ անցնում է, իսկ նրանց ծառայողների թիւը հասնում է 1700 հոգու։ Բոլոր կոօպերատիւ ձեռնարկութիւնների տարեկան ընդհանուր շրջանառութիւնը 10,000,000 ռուբլուց աւել է և բերում է զուտ արդիւնք տարեկան մօտ 700,000 ռուբլի,

39,785-63
Մեծ. կան գրադարան
ГСС Библиотека
ՀՍՍՌ-ում ՍՍՀ
Ա. ԻՄ Ա. Մասնաճյուղ

չընայած նրան, որ ծառայողների աշխատանքն այստեղ շատ լաւ է վարձատրւում։

Բէլգիական կօօպերացիաների ահագին մեծամասնութիւնը միջակ մեծութիւն ունի և բաղկացած է 500—1000 անդամից։ Բայց Բէլգիայում կան և շատ խոշոր կօօպերացիաներ։ Այսպէս, օրինակ, Գէնտ քաղաքի «Յառաջ» կօօպերացիան ունի 8,000 անդամ, Ռու քաղաքի «Համաձայնութիւն»-ը՝ 10,000 անդամ, Բրիւսէլի «Ժողովրդական տուն»-ը՝ 25 հազար և այլն։

Այս բոլոր կօօպերացիաները ներկայումս ունեն ահագին կայքեր ու գոյքեր։ Կօօպերատիւ ընկերութիւնների խոշոր մեծամասնութիւնն ունի թանգագին անշարժ կալուածներ։ Նրանց սեփական շինութիւնների մէջ գտեղւած են խանութներ, փուռներ, գրադարաններ, սրճարաններ ու դահլիճներ ամեն տեսակ ժողովների համար։ Այս բոլոր շինութիւնները գնահատւում են 7 միլիոն ռուբլուց աւել։ Բէլգիական բանւորների կազմակերպած կօօպերատիւ ընկերութիւնների ձեռքի տակ գտնւում են՝ 50 փուռ, որոնք տարեկան տասնեակ միլիոն փութ հաց են թխում, ութ տպարան, երեք հատ ծխախոտի գործարան, մի հատ մեծ մանուֆակտուրային գործարան 300 բանւորներով, տասը գարեջրի գործարան, մի քանի կօնդիտերի խանութ, կաթնատնտեսական ագարակներ, ատաղձագործարաններ, սեփական քսրատանք և բանջարեղէնի մի քանի տնտեսութիւններ։ Բանւորական կօօպերացիաներին պատկանող բոլոր խանութների թիւը հասնում է 300-ի։ Այս բոլոր ձեռնարկները տալիս են մինչև վեց տոկոս զուտ արդիւնք, մինչդեռ նոյն իսկ երեք տոկոս արդիւնքը համարւում է Բէլգիայում խիստ բաւարար։

Այս ամենը ձեռք է բերւած հասարակ բանւորների ջանքերով, որոնք իրանց յօժար կամքով համախմբւել են

կօօպերատիւ ընկերութիւնների մէջ։ Ծանօթանանք աւելի մօտիկ կօօպերատիւ ձեռնարկներից գոնէ մէկի հետ։

Կօօպերատիւ ընկերութիւններից ամենից հինը և ամենից շատ յարգանք վայելողը Բէլգիայում հանդիսանում է «Յառաջ» (Voruit) ընկերութիւնը Գենտ քաղաքում։ Այդ ընկերութիւնը հիմնւած է մօտաւորապէս 25 տարի առաջ մի խումբ բանւորների ձեռքով։ Փոխ առնելով 700 ռուբլի ջուլհակների միութիւնից, բանւորները որոշում են կօօպերատիւ հիմունքներով փուռ հիմնել։ Գործը հէնց սկզբից լաւ է գնում. առաջին տարւայ վերջում արդէն նոր կօօպերատիւ փուռը կարողանում է վերադարձնել իր պարտքը։

Նոր կօօպերացիայի անդամների մէջ կային գործունեայ ու հասկացող մարդիկ, դրանցից երկուսը առաջարկեցին ընկերութեանը վարձել մի հին բամբակ մանելու գործարան, որ գտնւում էր քաղաքի կենտրօնում, և շինել այնտեղ կատարելագործւած փուռ շոգէվառարաններով ու հունցելու մեխանիկական թիակներով։ Ընկերութեան ընդհանուր ժողովը ընդունեց այդ առաջարկը, և 1883 թ. բացւեց նոր փուռը։ Գործը շատ յաջող առաջ գնաց, մանաւանդ շնորհիւ այն հանգամանքի, որ կօօպերատօրները կարողացել էին ընտրել հմուտ բանւորներ ու լաւ կառավարիչներ։ Կօօպերացիան հէնց առաջին տարին ստացաւ այնքան մեծ արդիւնք, որ յետագայ 1884 թ. կարողացաւ հին շինութեան տեղ կառուցանել նորը, կատարելագործւած փուռով, ահագին դահլիճներով, յարմարեցրած զանազան ընկերութիւնների ժողովների և թատրոնական ներկայացումների համար, գրադարանով, մեծ խանութներով և այլն։ Ընկերութեան անդամների թիւը անմիջապէս սկսում է չափազանց արագ աճել, համարեա իւրաքանչիւր շաբաթ տասնեակ նոր բանւորներ մտնում են կօօպերացիայի կազմի մէջ։

1886 թ. Գենտում սկսում է լույս տեսնել օրաթերթ, և ընկերութիւնը շտապում է վարձով տալու իր շէնքի մի մասը թերթի տպարանի համար։ 1887 թ. փորձ է անում սկսել մանուֆակտուրային ապրանքների և պատրաստի հագուստեղէնի առևտուր։ Սկզբում առևտուրը լինում էր միայն երեկոները, բայց շուտով ստիպված եղան այդ ձեռնարկին ևս լայն ծաւալ տալու։

Մօտաւորապէս հէնց այդ ժամանակամիջոցին ընկերութիւնը բաց է անում մի դեղատուն. առևտուրն այնքան յաջող է ընթանում, որ մի տարուց յետոյ պահանջ է զգացւում բանալու երկրորդ կօօպերատիւ դեղատունը քաղաքի միւս մասում, իսկ համեմատաբար կարճ ժամանակամիջոցից յետոյ ընկերութիւնը հիմնում է նաև երրորդ դեղատունը։ Հէնց այդ ժամանակ կօօպերատօրները հիմնում են սրճարան, ժողովների համար դահլիճ, կօշկեղէնի արհեստանոց, տնային պիտոյքների առևտուր և այլն։

«Յառաջ» ընկերութեան օրինակը այնքան մեծ տպաւորութիւն է թողնում Բէլգիայի բանւորների վրայ, որ կօօպերատիւ ընկերութիւնները սկսում են մեծ քանակութեամբ առաջ գալ երկրի գանազան քաղաքներում։ Բայց այդ միջոցին քնած չէին և գործարանատէրերը. սրանց դուր չէր գալիս, որ բանւորները, շնորհիւ իրանց կօօպերատիւ ընկերութիւնների, սկսել էին համախմբուել սերտ միութիւնների մէջ։ Նրանք փորձեցին մաքառել «Յառաջ» ընկերութեան դէմ և այդ նպատակով բաց արին նոյն Գենտ քաղաքում նոր հացագործարան «ժողովրդական օգնութիւն» անուան տակ, որ ձգտում էր իր կողմը գրաւել բանւորներին, առաջարկելով մի շարք ամենաշահաւէտ պայմաններ։ Վտանգաւոր մրցակցին երօք յաջողւում է մի առ ժամանակ իր կողմը քաշել բանւորների մի մասը. «Յառաջ» ընկերութեան անդամների թիւը ըս-

կսում է ընկնել, սակայն յետոյ բանւորները շուտով ըմբռնում են, որ գործարանատէրերը առաջարկում են նրանց բոլոր այդ շահաւէտ պայմանները միայն մի նպատակով՝ ոչնչացնել բանւորական կօօպերացիան և ապա նորից իրանց ձեռքը ձգել բանւորական մասսաները։ Բանւորների համակրանքը կրկին դառնում է դէպի «Յառաջ» ընկերութիւնը, որը և շարունակում է զարգանալ մի հազւագիւտ յաջողութեամբ։

1899 թ. հոկտեմբերի 29-ին «Յառաջ» ընկերութիւնը տօնեց իր մի նոր մագազինի բացումը։ Դա մի նոր շէնք է, որ պատկանում է բանւորական կօօպերացիային և դեռ հեռից գրաւում է անցորդի ուշադրութիւնն իր ընդարձակութեամբ, մաքրութեամբ ու գեղեցկութեամբ։ Տօնին մասնակցելու համար ժողովւել էին Բէլգիայի գանազան քաղաքներից ու գիւղերից 20,000 հոգուց աւել մարդիկ։ Այդ բազմութիւնը հանդիսաւոր թափօրով անցաւ քաղաքի գլխաւոր փողոցներով։ Դրօշակների վրայ, որ տանում էր ամբոխը, կային բազմաթիւ մակագրութիւններ, որոնք պարզ արտայայտում էին, թէ բանւորները որքան բարձր են գնահատում իրանց կօօպերացիան։ Այսպէս, օրինակ, կային դրօշակներ, որոնց վրայ կարելի էր կարդալ այսպիսի մակագրութիւններ «շնորհիւ «Յառաջ» ընկերութեան, բարւոքւել է Գենտ քաղաքի նիւթական դրութիւնը», «փառք ու պատիւ «Յառաջ» ընկերութեան, որ մաքառում է չքաւորութեան դէմ», ««Յառաջ» ընկերութիւնը կազմակերպւել է 700 ռուբլիով, որ ժողովել են աղքատ ջուլհակները. հիացէք նրա ստեղծագործութիւնով!» և այլն. և արդարև. բոլոր այստեղ պատմուածներից մենք տեսնում ենք, որ կարելի է, իսկապէս, հիանալ այն հասարակական ոյժով, որը պարունակւած է կօօպերատիւ ձեռնարկների մէջ։

III

Հետաքրքիր է փոքր ինչ կանգ առնել երկրագործական կօոպերացիաների վրայ։ Այդ կողմից ուշադրութեան արժանի է մանաւանդ փոքրիկ Դանիան, որը, բնակիչների թւի կողմից աւելի փոքր է քան, օրինակ, Ռուսաստանի միջակ մեծութեան նահանգը։ Այստեղի բոլոր երկրագործական տնտեսութիւնների կէսից աւելին մանր տնտեսութիւններ են, որոնցից իւրաքանչիւրն ունի հազիւ 30 դեսեատին հող։ Դեռ մի հարիւր տարի առաջ Դանիան բոլորովին աղքատ պետութիւն էր, իսկ այժմ նա երկրագնդի ամենահարուստ երկիրներից մէկն է։

Ներկայումս Դանիայի բոլոր հողերը գեղեցիկ մշակւած են. չոր ու աւազոտ անապատները վերածւած են կանաչ գաշտերի ու արտերի. ճահիճները չորացրած են, և նոյն իսկ ծովի յատակի մի մասը խլւած է ու գործադրւած նոյն նպատակին։ Արդարև. մինչդեռ Զելանդիա կղզու վրայ, օրինակ, չորացրած է ծովի յատակից 14 հազար դեսեատին, ամբողջ Դանիայում նոյն ճանապարհով ձեռք է բերւած 37 հազար դեսեատին մշակւած հող։

Գիւղատնտեսութիւնն այստեղ այնքան լաւ հիմունքների վրայ է դրւած, որ Դանիան ոչ միայն ապահովում է իրան հացով, այլ և արտահանում է բաւականաչափ իւղ, միս, բուրդ, կաշի ու ձու. դա լաւ աշխատանք է տալիս ազգաբնակութեանը, և շնորհիւ դրան ժողովուրդը կարողանում է վարել կատարելապէս բարեկեցիկ կեանք։ Դանիայի երկրագործութեան այս յաջողութիւնը գլխաւորապէս պարտական է բազմաթիւ ամեն տեսակի միութիւններին ու ընկերութիւններին, որոնք պատել են ամբողջ երկիրը խիտ ցանցով։ Եւ, իսկապէս, դուք այստեղ կը տեսնէք իւղի ու պանրի բազմաթիւ գործարաններ, որոնք

բանւորական խմբակցութիւններով են (артельный) կազմակերպւած, միութիւններ իւղ ու ձու արտահանելու համար. ընկերութիւններ, որոնք գնում են ընդհանուր ոյժերով հողը պարարտացնող արհեստականնիւթեր, գիւղատնտեսական գործիքներ, եղներ, ձիեր, նոյնպէս և գալանտէր ապրանքներ, որ ձեռք են բերում ամբողջ գիւղերը միասին։ Այնտեղ, տեղումը, դիւրին է համոզւել, որ Դանիայի երկրագործութիւնն իր ամբողջ յաջողութեամբ պարտական է բացառապէս կօոպերատիւ ընկերութիւնների զարգացման։ Եւ արդարև. ենթադրենք, թէ հարկաւորէ ընտանի կենդանիների տեսակը բարելաւել, որպէսզի կարելի լինի ստանալ աւելի շատ մսեղէն ու կաթնեղէն մթերքներ, և ահա անմիջապէս կազմակերպւում է արտել՝ եղներ առնելու համար, և դրանց համար վճարում են հազարներ. կամ, օրինակ, պարզւում է, որ իւղը միայն այն դէպքում լաւ կոստահանւի արտասահման, երբ միանւագ մեծ քանակութեամբ ուղարկւած իւղը մի տեսակի է և նոյն իսկ մի գոյնի. և ահա կազմակերպւում են արտելի սկզբունքներով իւղագործարաններ, որոնք հիմնում են միահմուռ ոյժերով կենտրոնական պահեստատեղի, ուր իւղը ենթարկւում է վերջնական մշակման և ընդունում է այնպիսի գոյն ու որակ, որպիսին պահանջւում է արտահանութեան համար։ Նոյն հիմունքների վրայ է դրւած նաև ձուի արտահանութիւնը։

Դանիայի գիւղատնտեսները, կամենալով ձեռք բերել արտասահմանի մուշտարիների վստահութիւնը, կազմակերպել են «Ձուի արտահանութեան Դանիական ընկերութիւնը», որ ընդգրկում է իր մէջ 18 հազար առանձին տնտեսութիւններ։ Բոլոր ձուերը, որ ստանում է ընկերութիւնը, պիտի լինեն ոչ աւելի, քան եօթ օրւայ։ Իւրաքանչիւր ձուի վրայ դրւած է տիրոջ համարը, ամեն մի փչացած ձուի համար տէրը ենթարկւում է տուգանքի։

Նոյնանման փոփոխութիւն գիւղատնտեսութեան մէջ մենք նկատումենք և Իրլանդիայում՝ մի համեմատաբար փոքրիկ կղզու վրայ, որ պատկանում է Մեծ-Բրիտանական կայսրութեան։ Դեռ 25 տարի առաջ այդ երկրի գիւղատնտեսութիւնը գտնւում էր ամենախղճուկ վիճակի մէջ։ Իսկ այժմ նա ամբողջովին դուրս է եկել նախկին աղքատ ու քայքայւած դրութիւնից։ Իրլանդիային ազատեց կաթնատնտեսութիւնը և թռչնաբուծութիւնը, որոնք զգալի չափով դառել են արդիւնաւէտ, շնորհիւ բազմաթիւ կօօպերատիւ ընկերութիւնների։ Այսպէս, առաջին կաթնատնտեսական արտելը, բաղկացած 50 անդամներից, կազմակերպւեց Իրլանդիայում 1889 թ., իսկ 10 տարուց յետոյ արտելների թիւը հասաւ 100-ի, 20 հազար անդամով և 55 հազար ռուբլի դրամագլխով։ Իսկ 1900 թ. վերջում փոքրիկ Իրլանդիայի կօօպերացիաների անդամների ընդհանուր թիւը հասնում էր 45 հազար հոգու։ Բէլգիայում, ինչպէս մենք արդէն տեսանք, քաղաքների բանւորները կազմակերպում են զանազան բազմաթիւ կօօպերատիւ ձեռնարկութիւններ. գիւղական ազգաբնակութիւնը ևս այդ կողմից յետ չէ մնացել քաղաքացիներից։ Այսպէս, 1900 թ. կային 1,297 զանազան կարգի գիւղատնտեսական միութիւններ և ընկերութիւններ, որոնցից 258-ը կաթնատնտեսական արտելներ էին։

Նոյնանման յաջողութեան գիւղատնտեսութեան մէջ հասել էր մեր Ֆինլանդիան, որտեղ գիւղացին համարեա մերկ գրանիտի վրայ կարողացաւ իր կեանքը աւելի լաւ ապահովել, քան ռուս մուժիկը սեւահողի վրայ, որն ապշեցնում է իր արգաւանդութեամբ։

Կանգ առնենք նաև Գերմանիայի վրայ, որտեղ 1900 թ. կային 13,636 գիւղատնտեսական ընկերութիւններ. $7_{1/2}$ տարւայ ընթացքում այդ ընկերութիւնների թիւը աւելացել էր $2_{1/2}$ անգամ։ Այս գիւղատնտեսական ընկերութիւններին մասնակցում են ներկայումս մինչև 570 հազար գիւղատնտեսներ, իսկ որովհետև բոլոր գիւղատնտեսների թիւը Գերմանիայում հասնում է մօտ 5 միլիօն հոգու, հետևաբար միջին հաշւով ամեն մի տասնեակ գիւղատնտեսներից մէկը գտնւում է որև է կօօպերատիւ ընկերութեան մէջ։

Եւ այս բոլոր կօօպերացիաների մէջ գլխաւորապէս մասնակցում են մանր գիւղատնտեսները, որոնք մշակում են իրանց արտերը սեփական ձեռքերով, այսինքն, ուրիշ խօսքով՝ գիւղացիներ են։

Այս տեսակ օրինակների թիւը մենք կարող էինք դեռ բաւականաչափ աւելացնել, բայց առաջ բերւածներն էլ բաւական են։ Այստեղ նկարագրւածից արդէն իսկ երևում է, որչափ մեծ ոյժ է ներկայացնում եւրօպական քաղաքակրթւած պետութիւններում կօօպերացիան տնտեսական ձեռնարկների ասպարէզում, չընայած, որ ժողովրդական մասսաները միայն մի քանի տասնեակ տարի առաջ են սկսել գիտակցօրէն ու սիստեմատիքաբար կիրառել կօօպերացիան կեանքի մէջ։

ԿՕՕՊԵՐԱՑԻԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

I

Մեզ մօտ ևս, մեր հայրենիքում, ամենալաւ մարդիկ, որոնք նւիրւած են ժողովրդի շահերին, վաղուց արդէն մատնացոյց են արել և այժմ էլ պնդում են, որ անհրաժեշտ է սովորցնել մեր ժողովրդին աշխատակցութեան, կօօպերատիւ գործին։

Համարեա 25 տարի առաջ մեր ականաւոր գրողներից մէկը՝ Գլեբ Ուսպենսկին, որ գեղեցիկ ուսումնասիրել

է գիւղացիական կեանքը, գրել է հետեւեալը. «իմ կարծիքով, ժամանակակից ռուս գիւղացու կեանքը իւրաքանչիւր քայլափոխում, կարծես, աղաղակում է, որ միայն ընկերակցութիւնը, գործակցութիւնը և ընդհանուրի օգտին միահմուռ ոյժերով տարած գործի փոխադարձ գիտակցութիւնն է, որ կազմում են գիւղական աշխարհի միակ յոյսը փոքր ի շատէ լաւ ապագայ ձեռք բերելու. դրանք են, որ միայն հնարաւորութիւն կը տան «կրճատելու» աշխատանքի հոկայական չափերը, մի աշխատանքի, որ կլանում է գիւղացու ամբողջ կեանքը»...

Այդ օրանից ի վեր մեր գիւղն աւելի ևս քայքայւել է, և, հետեւաբար, աւելի զօրեղ կերպով է զգացւում նրա կեանքին կօոպերատիւ կազմակերպութիւն տալու պահանջը։ Երբ 1902 թ. գաւառներում ու նահանգներում կազմակերպւեցին գիւղատնտեսական կոմիտէներ, որպէսզի պարզեն գիւղատնտեսութեան կարիքները և մատնանիշ անեն այն միջոցների վրայ, որոնցով կարելի էր բաւարարութիւն տալ այդ կարիքներին,—շատերն այն միտքը յայտնեցին, որ անհրաժեշտ է ըստ հնարաւորութեան լայն չափերով տարածել մեր գիւղերում զանազան կօոպերատիւ հաստատութիւններ։

Այդ գիւղատնտեսական կոմիտէներում բերւում էին չափազանց բազմազան ապացոյցներ յօգուտ կօոպերացիաների։ Մատնանիշ էին անում, օրինակ, այն հանգամանքի վրայ, որ միանւագ մեծ քանակութեամբ զանազան ապրանքներ առնելուց՝ գիւղական ազգաբնակութիւնը կրստանայ աւելի լաւ ապրանք անհամեմատ էժան գներով, իսկ իր ապրանքները կը ծախի աւելի շահաւէտ պայմաններով. որ կօոպերատիւ հիմնարկութիւնների միջոցով աւելի դիւրին կարելի է փոխարինաբար փող վերցնել և այս էլ աւելի նպաստաւոր պայմաններով, քան մասնաւոր մարդկանցից. որ միացեալ գործունէութեամբ աւելի հեշտ

են իրագործւում ամեն տեսակ տնտեսական բարւոքումներ. որ կօոպերացիայի միջոցով աւելի դիւրին է ձեռք բերել փոխադարձ օգնութիւն զանազան աղէտների դժբախտութիւնների դէպքերում, կազմակերպելով ապահովագրութեան ընկերութիւններ հրդեհից, կարկտից, անասունների կոտորածից։ Մի խօսքով գիւղատնտեսական կոմիտէները շատ լաւ էին հասկանում, որ «երկու շուն միասին աւելի շատ նապաստակներ կը բռնեն, քան չորսը՝ ջոկ-ջոկ»։

Բայց կօոպերացիան ոչ միայն պէտք է դիւրացնի գիւղացիական կեանքի ամբողջ ընթացքը, այլ և միաժամանակ նա յաճախ միակ ելքն է այն խղճուկ դրութիւնից, որի մէջ ներկայումս գտնւում է մեր գիւղատնտեսութիւնը։ Եւ յիրաւի, գիւղացին շատ տեղերում այժմ արդէն հնարաւորութիւն չունի հետեւելու հին եռամեայ սերմափոխութեան սիստէմին. նրա համար անհրաժեշտ է խոտ ցանել, կայուն հիմունքների վրայ դնել կաթնատնտեսութիւնը, զբաղւել աւելի մեծ խնամքով այգեգործութեամբ, տնայնագործութեամբ ու պահել բանջարանոցներ։ Բայց այդ բոլորը նոր հիմունքների վրայ դնելու համար պահանջւում է դրամագլուխ, իսկ մեր գիւղը ամբողջովին աղքատացել է, և միայն կանոնաւոր կազմակերպւած կօոպերացիաների միջոցով կարելի է ձեռք բերել անհրաժեշտ դրամագլուխը։ Սակայն այդ էլ բաւական չէ։ Ունենալով նոյն իսկ անհրաժեշտ դրամագլուխ, յաճախ անհնարին է անցնել տնտեսութեան նոր ձևերի։ Չէ որ անկարելի է հին արօրով ու փայտէ ցաքանով գործ տեսնել, երբ հողը պահանջում է նոր, աւելի մեծ խնամքով մշակումն։

Ստիպւած պիտի գտնել ու գործածել նոր աւելի կատարելագործւած գործիքներ՝ գութաններ, կասելու ու քամելու մեքենաներ։ Այդ ամենը պէտք է յարմար գայ տնտեսութեան, պէտք է ձեռք բերել մեծ զգուշութեամբ ու խնայողութեամբ, որովհետև այդ գործիքների վրայ

կարող են յաճախ ծախսել գիւղացու վերջին գրօշները։ Հետևաբար, նա պիտի անձամբ տեսնի, զննի ու թերևս, նոյնիսկ փորձի ենթարկի այդ գործիքների զանազան տեսակները, նախ քան կը վստահանայ գնել։ Իսկ այդ բոլոր յարմարութիւնները, իհարկէ, կարող է նրան տալ միայն կօօպերացիան, միայն ընդհանուր ոյժերով հնարաւոր է ապահովել այդ ամենի իրագործումը։ Ահա թէ ինչու արդարացի են նրանք, որոնք պնդում են, թէ առանց կօօպերացիայի անկարելի է յուսալ, թէ մեր գիւղատնտեսութիւնը կը բարւոքւի։

II

Մենք արդէն ասացինք, որ կօօպերացիայի նշանակութիւնը ռուս ժողովրդի կեանքի համար գնահատւած էր դեռ շատ տարիներ առաջ ռուս հասարակութեան ամենալաւ մասի կողմից։ Համարեա թէ գիւղացիներին ճորտութիւնից ազատելու օրից սկսած, փորձեր էին անւում ընտելացնելու ռուս ժողովրդին կօօպերատիւ ձեռնարկութիւններին։ Մենք այստեղ կանգ կառնենք այն կօօպերատիւ ձեռնարկութիւնների վրայ, որոնք ժողովրդին մօտ էին և այժմ էլ մօտ են կանգնած, և որոնք կարող էին նրան մեծ ու շուտափոյթ օգնութիւն հասցնել։

Սկսենք թէկուզ փոխատու-խնայողական ընկերութիւններից։ Առաջին այս տեսակի կօօպերացիան հիմնւած էր դեռ 1865 թ. Կոստրոմայի նահանգի Ռօժդեստվենսկի գիւղում։ Փոխատու-խնայողական ընկերութիւնները սովորաբար կազմակերպւում են հետևեալ հիմունքներով. ընկերութեան անդամ կարող է լինել ամեն մի մարդ առանց դասային խտրութեան։ Նոր անդամները ընտրւում են ընկերութեան ընդհանուր ժողովում։ Իւրաքանչիւր անդամ ընկերութեան մէջ մտնելիս պիտի վճարի մի որոշ գումար՝ բաժին։ Ընկերութիւնը փող է

պարտք տալիս, ընդունում է տոկոսով պահելու համար գումարներ և անում փոխառութիւններ. ընկերութեան պարտքերի համար պատասխանատու են անդամները՝ սովորաբար իրանց գոյքով։ Ընկերութեան գործերը վարում են խորհուրդն ու վարչութիւնը, որոնք ընտրւում են ընդհանուր ժողովից։ Հաշւէտւութեան հաստատութիւնը և կարևոր հարցերի քննութիւնը կատարւում է ընդհանուր ժողովներում։ 1895 թ. սկսած փոխատու—խնայողական ընկերութիւնների իրաւասութեան շրջանը բաւականաչափ ընդլայնւած է։ Նրանց թոյլատրւած է փող պարտք տալ թէ երկար ժամանակով և թէ, գրաւ վերցնելով շարժական ու անշարժ կալւածներ, ապա և միջնորդ հանդիսանալ, երբ ընկերութեան անդամները առնում են իրանց տնտեսութեան համար անհրաժեշտ զանազան պիտոյքներ, կամ ծախում են իրանց աշխատանքի արտադրութիւնները։

Փոխատու խնայողական ընկերութիւններին իրանց կազմակերպութեամբ շատ մօտ են կանգնած փոխատու—խնայողական դրամարկղները, որոնք տարածւած են գլխաւորապէս Բալտեան շրջանում, Լիֆլանդիայի, Կուրլանդիայի և Էսթլանդիայի նահանգներում։ Փոխատու—խնայողական ընկերութիւնների ու դրամարկղների ընդհանուր թիւը 1903 թ. յունւարի մէկին հասնում էր, 852-ի մօտաւորապէս 400 հազար անդամներով։ Այս հիմնարկութիւնների պարտք տւած և դեռ յետ չը ստացած փողի ընդհանուր գումարը հասնում էր 1903 թ. մօտ 38 միլիօն ռուբլու։

Նոյն նպատակին՝ հեշտութեամբ ձեռք բերել փոխարինաբար փող, ներկայումս ծառայում են վարկի ընկերութիւնները։ Սրանք շատ նման են փոխատու—խնայողական ընկերութիւններին, բայց և մի քանի ուրիշ կողմերով էլ տարբերւում են նրանցից։ Առաջին տարբերու-

թիւնը նրանումն է, որ վարկի ընկերութիւնների դրամագլուխը բաժիններից չէ գոյանում, այլ կազմւում է այն գումարներից, որոնք տրւում են կամ նւէր, կամ փոխարինաբար՝ զեմստվոյական, հասարակական կամ մասնաւոր հիմնարկութիւնների և անձնաւորութիւնների կողմից, կամ թէ արքունի գանձարանից ու պետական բանկից։ Այս տեսակէտից վարկի ընկերութիւնները ազգաբնակութեան չքաւոր խաւերի համար աւելի արտօնաւոր են, քան փոխատու-խնայողական ընկերութիւնները։ Վարկի ընկերութիւնները ունեն էլի ուրիշ առաւելութիւններ և ընդհանրապէս համարւում են աւելի կատարելագործւած կօօպերատիւ հիմնարկութիւններ։

Վարկի ընկերութիւնները մեզանում սկսեցին կազմակերպւել միայն 1895 թւականից։ 1904 թ. կիսում գործում էին արդէն 452 ընկերութիւն, որոնց պարտքով տրւած փողի ընդհանուր գումարը 1904 թ. կազմում էր մօտաւորապէս 4 միլիօն ռուբլի, իսկ զուտ արդիւնքը՝ մօտաւորապէս 200 հազար ռուբլի, մինչդեռ փոխատու—խնայողական ընկերութիւնների ու դրամարկղների զուտ արդիւնքը մի միլիօն ռուբլուց էլ աւել էր։

Սպառողական ընկերութիւնները նոյնպէս սկսեցին կազմակերպւել 1865 թւականից։ Այդ կարգի ընկերութիւններ հիմնելու համար երկար ժամանակ պահանջւում էր ներքին գործերի մինիստրի թոյլտւութիւնը, և միայն 1897 թ. նահանգապետներին իրաւունք տրւեց թոյլատրել կազմելու այդ տեսակ ընկերութիւններ ընդունւած (նորմալ) կանոնադրութեան համաձայն։ Այդ տեսակ սպառողական ընկերութիւններ մատակարարում են իրանց անդամներին ըստ հնարաւորութեան էժան գներով տնային տնտեսական պիտոյքներ՝ որոնց համար կարող են սեփական պահեստներ ունենալ կամ կապալով վերցնել բնակարաններ. նրանք կարող են պայմանագրեր կապել, փոխատու-

թիւններ անել և այլն։ Այդ ընկերութիւնների բոլոր գործերը վարում են անդամների ընդհանուր ժողովը և նրանցից ընտրւած վարչութիւնները։ Ռուսաստանի սպառողական ընկերութիւնների ընդհանուր թիւը 1904 թ. յունւարի մէկին հասնումէր 930-ի, մի քանի հարիւր հազար անդամներով. նրանց տւած զուտ արդիւնքը, հաւանականօրէն, հասնում էր տարեկան ոչ պակաս քան 2 միլիօն ռուբլու։

Վերջապէս, անհրաժեշտ է մի քանի խօսք ասել նաև գիւղատնտեսական ընկերութիւնների մասին, որոնք ուսումնասիրում են գիւղատնտեսութեան վերաբերեալ հարցեր, տարածում են ազգաբնակութեան մէջ գիւղատնտեսական գիտութիւններ և ապա իրանց պահեստներից ծախում են գիւղատնտեսների համար անհրաժեշտ պիտոյքներ։ Այսպէս, գիւղատնտեսական ընկերութիւնները ևս զբաղւում են որոշ չափով կօօպերատիւ ձեռնարկութիւններով։ Բայց գիւղատնտեսական ընկերութիւնները գոյութիւն ունեն ներկայումս չափազանց սահմանափակ թւով։ Այսպէս, 1902 թ. ապրիլի 1-ին կային ընդամենը 529 գիւղատնտեսական ընկերութիւն իրանց բաժանմունքներով, որոնց անդամների թիւը հազիւ թէ հարիւր հազարից աւելի լինէր։

III

Սրանից մենք տեսնում ենք, որ մեզ մօտ շատ չնչին է կօօպերատիւ հիմնարկութիւնների թիւը, այնպէս որ նրանց մէջ չեն կարող մասնակցել ժողովրդական լայն մասսաները։ Մեր հայրենիքի անսահման տարածութեան վրայ նրանց թիւը նոյն իսկ 3000-ի էլ չէ հասնում. բացի այդ՝ նրանց կէսը բացառապէս նւիրւած է փոխատուութեան գործին։ Բայց եթէ նայելու լինենք, ինչպէս են դասաւորւած այդ

կօօպերացիաները գիւղի և քաղաքի մէջ, մենք կը համոզենք, որ նրանց ժողովրդին մատուցած ծառայութիւնը պէտք է համարել առաւել ևս աննշան։ Արդարև. վերցնենք, օրինակի համար, դէթ սպառողական ընկերութիւնները. մենք կը տեսնենք, որ նրանց խոշոր մեծամասնութիւնը հիմնուած է քաղաքներում՝ և նրանցից օգտւում են համարեա բացառապէս քաղաքի բնակիչները՝ պաշտօնեաները, սպաները, երկաթուղու և գործարանների ծառայողները։

Գիւղական սպառողական ընկերութիւնները հազիւ կազմում են բոլոր սպառողական ընկերութիւնների նոյն իսկ քառորդ մասը։ Չը պէտք է կարծել, որ գործարանական ու երկաթուղային ձեռնարկները ծառայում են սոսկ աշխատաւոր մարդկանց շահերին։ Ընդհակառակը, բանւորական յուզումների ժամանակ նկատուած է, որ բանւորական մասսան աւերում է նաև իր սպառողական խանութները։ Եւ դա երբէք չէ կարելի բացատրել ամբոխի գիշատիչ հակումներով։ Ոչ. բանւորները մեզ մօտ յաճախ գիտակցօրէն ատում են գործարաններին կից հիմնուած սպառողական ընկերութիւնները։ Բանը նրանումն է, որ այդ սպառողական ընկերութիւնները շատ յաճախ հիմնւում են ոչ թէ բանւորների ցանկութեան համաձայն, այլ գործարանների վարչութիւնների կարգադրութեամբ։ Այդ դէպքում ընկերութեան մէջ մտնում են գլխաւորապէս գրասենեակների ծառայողները, որոնք միշտ մեծ կախումն ունեն տեղական ղեկավարներից, վարպետները, որոնք մշտական թշնամական յարաբերութիւնների մէջ են բանւորների հետ, և մի քանի բանւորներ, որոնք նիւթապէս աւելի ապահով են ու աւելի հեզ։ Շնորհիւ դրան, գործարանի վարչութիւնը ամբողջ գործն իր ձեռքն է առնում և վարում իր ուզածի համեմատ։ Նա յաճախ ստիպում է բանւորներին անպատճառ գնել անհրաժեշտ մթերքները գործարանի սպառողա-

կան ընկերութեան խանութից և տալիս է բարձր գներով վատ ապրանքներ։ Պարզ է, որ այդ տեսակ պայմաններում սպառողական ընկերութիւնը ոչ միայն չէ թեթևացնում բանւորի դրութիւնը, այլ միայն առաւել ևս նրան ստրկացնում է գործարանատիրոջը։ Ահա թէ ինչու մեր բանւորները այնքան յաճախ բացարձակ ատելութեամբ են վերաբերւում սպառողական ընկերութիւններին, մինչդեռ Արևմտեան Եւրոպայում նոյն սպառողական ընկերութիւնները հանդիսանում են ամբողջ բանւորական մասսայի պարծանքի առարկայ։

Ինչ վերաբերում է գիւղատնտեսական ընկերութիւններին, դրանց կազմակերպումը սկսուած է գիւղերում միայն վերջին ժամանակները։ Ներկայումս գործող գիւղատնտեսական ընկերութիւնների ահագին մեծամասնութիւնը բացուած է քաղաքներում, և նրանց մասնակցում է գլխաւորապէս տեղական ինտելիգենցիան։ Գիւղացիութիւնն այդ ընկերութիւնների կեանքում համարեա չէ խաղացել ոչ մի դեր։ Ճիշտ է, որ գիւղացիութիւնը լայն չափերով օգտւել է գիւղատնտեսական ընկերութիւնների պահեստներից, նախագասելով ընտեսութեան համար անհրաժեշտ պիտոյքները գնել այդ տեղից, բայց այդ դէպքում գիւղացիները հանդիսանում են սոսկ հասարակ մուշտարիներ և ոչ կօօպերացիային մասնակցողներ, կօօպերատորներ։

Մնում են հետևաբար փոխատու-խնայողական ու վարկի ընկերութիւնները, որոնք, իսկապէս, տիրաբար տարածում են իրանց գործունէութիւնը գիւղական ազգաբնակութեան վրայ։ Սակայն և այս դէպքում ապացուցած է, որ վարկով, գոնէ փոխատու-խնայողական ընկերութիւններից, օգտւում են համարեա բացառապէս ուժեղ տնտեսութիւնները, միջին կարողութեան տէր գիւղացիները։

Այսպէս, ուրեմն, մեր կօօպերատիւ հիմնարկութիւնները իրանց 40 ամեայ գոյութեան ընթացքում խիստ թոյլ արմատներ են ձգել ժողովրդական մասսաների մէջ, համախմբել են իրանց ձեռնարկների շուրջը չնչին քանակութեամբ գիւղացիներ ու բանուորներ։ Եւ արդարև. եթէ Գերմանիայում իւրաքանչիւր տասնեակ գիւղատնտեսից մէկը մասնակցում է որևէ կօօպերացիայի, մեզանում, տայ Աստուած, որ հարիւրից մէկը անդամ լինէր որևէ կօօպերատիւ հաստատութեան։ Բացի այդ, պէտք է ի նկատի առնել և այն, որ մեր կօօպերատիւ ընկերութիւնները դասաւորուած են մեր հայրենիքի ամբողջ տարածութեան վրայ չափազանց անհաւասար կերպով. կան շրջաններ, եւրօպական ամբողջ պետութիւնների մեծութեամբ, որտեղ չես հանդիպիլ մի հատիկ կօօպերատիւ հիմնարկութեան։

Սակայն մեզ մօտ կօօպերատիւ հիմնարկութիւնները ոչ միայն առհասարակ սակաւաթիւ են, այլ և այնտեղ, ուր նրանք գոյութիւն ունեն, գործումեն ոչ բաւականաչափ տոկունութեամբ և ուժեղ, և վերջ ի վերջոյ շատ յաճախ ոչ մի նշանակութիւն չունեն տեղական ազգաբնակութեան համար։ Վերցնենք, օրինակի համար, կրկին փոխատու-խնայողական ընկերութիւնները։ Մեծ մասամբ դրանք այնքան աղքատ են դրամագլխով, որ ստիպւած են սահմանափակել իրանց գործը չափազանց նեղ շրջանով։ Եւ, իրօք, միթէ՞ կարելի է շատ բան անել, երբ, օրինակ, Վիլնայի նահանգի իւրաքանչիւր բնակչի վրայ ընկնում է 7 կոպ. այն դրամագլուխներից, որոնք գտնւում են այդ նահանգի փոխատու-խնայողական ընկերութիւնների ձեռքի տակ՝ ազգաբնակութեանը պարտքով փող տալու համար. կամ եթէ Գրոդնոյի նահանգում ընկնում է 5 կոպ., իսկ Վիտեբսկի նահանգում միայն 3 կոպ.։

Նոյն խախուտ հիմունքների վրայ են դրուած մեր հայրենիքի նաև միւս կօօպերատիւ ձեռնարկները։

IV

Այն ինչ մեր ժողովրդի կեանքի մէջ վաղուց ի վեր գոյութիւն ունեն մի շարք հաստատութիւններ, որոնք կարող էին դիւրացնել կօօպերատիւ ձեռնարկութիւնների տարածելը ազգաբնակութեան մէջ. դա՝ արտելն է և համայնքը։

Համայնական տիրապետութիւնը այն ձևով, որով նա այժմ գոյութիւն ունի, յաճախ հանդիսանում է գիւղացու համար մի մեծ բեռ, սակայն ուրիշ պայմաններում նոյն համայնական տիրապետութիւնը կարող էր մատուցանել գիւղացիութեանը մեծ ծառայութիւններ, ուղեկցել նրան կազմակերպելու իր հողի վրայ կօօպերատիւ ձեռնարկներ։ Դրա մէջ կարելի է համոզւել, եթէ աչքի անցնելու լինենք ժամանակակից գիւղացիական համայնքի կեանքը։

Վերցնենք մի քանի օրինակ։

Այսպէս, մեր լայնածաւալ պետութեան համարեա ամեն մի գաւառում դուք կը գտնէք դէպքեր, որ խոտհարքը կատարում է ամբողջ գիւղական համայնքը. նա Ի հնձում ու հաւաքում խոտը, իսկ երբ խոտը չորանում է, բաժանում է իր անդամների մէջ. այսինքն՝ խոտհարքը կատարւում է կօօերատիւ ձևով։ Մի քանի գաւառներում, ինչպէս, օրինակ, Կազանի նահանգի Տետիւշկի գաւառում կամ Օրլովի նահանգի Ելեցկի գաւառում այդ ձևի խոտհարքը տեղի ունի համայնքների մեծ մասում։ Իսկ Վոլգայի պարարտ մարգերի այդ ձևի խոտհարքը ներկայացնում է ուղղակի մի զարմանալի տեսարան։

«Ամեն տարի խոտհարքի միջոցին—պատմում է մի ականատես—հաւաքւում են Վոլգայի մարգերում հարիւրա-

ւոր գիւղերի բնակիչներ. հազարաւոր հնձւորներ, բաժանւելով մի գիւղական համայնքի պատկանող խմբերի, տեղաւորւում են իրանց հողաբաժինների սահմաններում։ Սկսւում է մարգագետինների բաժանումը։

Քանի մարգագետինները բաժանւում են հետզհետէ աւելի ու աւելի մանր միաորակ մասերի, հազարաւոր հնձւորներն էլ բաժանւում են աւելի ու աւելի փոքր խմբերի ու խմբակների՝ «հարիւրակների», «տասնեակների», «հինգեակների», «քառեակների»։ Ապա վիճակ են ձգում ու վիճակի համեմատ էլ խմբերը ցրւում են ու բռնում իրենց ընկած տեղերը։

Շաչում են արտելի մանգաղները, և լայնատարած ու կանաչ խոտառատ դաշտերի տեղ աշնանը ձգւում են խոտի դէզերի անվերջ շարքերը։ Ուշ աշնանը, համարեա թէ ձմեռը, մարգերում կրկին տիրում է կենդանութիւն. խոտի դէզերից կազմում են խուրձեր—և նորից սովորական վիճակը, ընդհանուր աշխատանքի արդիւնքը՝ ըստ շնչի, մշակի, ծուխի»։

Յայտնի է, որ շատ տեղերում կան համայնական ջրաղացներ։ Միջին Ռուսաստանի մի քանի գաւառներում այդպիսի ջրաղացների թիւը իւրաքանչիւր գաւառում հասնում է 20-ի։

Անկարելի է չը յիշել նաև, որ շատ տեղերում անասուը կարում են վարելահողի համար նոյնպէս ամբողջ համայնքի աշխատանքով։ Նկատւած են ոչ սակաւ դէպքեր, երբ համայնականների կօօպերատիւ աշխատանքով բարւոքւած են մարգերը և վարելահողերը։ Այսպէս, օրինակ, Ենիսէյսկի նահանգում և Զաբայկալսկի շրջանում մի քանի տեղեր համայնականները իրանց վարելահողերի համար ջուր են անցկացրել առուներով հեռաւոր աղբիւրներից։

Բոլոր այստեղ առաջ բերւած օրինակները ցոյց են տալիս, որ համայնական տիրապետութիւնը բարեպատեհ

պայմաններում նպաստում է կօօպերատիւ ձեռնարկներին ու կօօպերատիւ տնտեսութեանը։ Իսկ չէ՞ որ մեզանում 65 միլլիոն հոգուց աւել մարդիկ տիրում են հողին համայնական իրաւասութեան հիման վրայ, և դրանց պատկանում է 100 միլլիոն դեսեատինից աւել հող։ Բայց քանը նրանումն է, որ համայնական տիրապետութիւնը կարող է նպաստել կօօպերատիւ տնտեսութեանը միմիայն որոշ պայմաններում։

Ռուսական կեանքը ստեղծել է մի ուրիշ հաստատութիւն, որ կարող էր նպաստել կօօպերացիայի զարգանալուն ժողովրդի մէջ. դա՝ արտելն է։ Արտելը ինքն ըստ ինքեան ներկայացնում է կօօպերացիա, միայն թէ մեծ մասամբ ժամանակաւոր ու նեղ չափով կատարելագործւած։ Մեր գիւղացիութեան ու բանւորութեան մէջ կան բազմաթիւ զանազան տեսակ արտելներ։ Արտելներ կազմակերպւում են, որպէսզի նրա անդամները չիջեցնեն մէկը միւսի աշխատավարձը։ Շաղրինսկի գաւառի գիւղախմբերից մէկում (վոլոստ), օրինակ, կան խոզանակագործներ, որոնք պատրաստում են խոզանակներ պատւիրատուների տւած նիւթից։ Երբ հասնում է աշխատանքի գնալու ժամանակը, նրանք բաժանւում են 10—20 հոգուց բաղկացած խմբերի, և ամեն մի խումբ գնում է իր շրջանը. այստեղ խումբը նորից բաժանւում է առանձին զոյգերի և ապա իւրաքանչիւր զոյգ գնում է աշխատանք ճարելու այն գիւղը, որը նրա համար նշանակւած է։ Այսպիսով խոզանակագործները չեն խանգարում իրար և չեն պակասեցնում աշխատանքի գները։ Երբեմն, ինչպէս, օրինակի համար, Պոնոմարեով գիւղում և չորս ուրիշ հարևան գիւղերում (Եարոսլաւսկի նահանգ), որոնք զբաղւած են ապրանքների համար արկղներ պատրաստելով, պատւէրները ընդունում են ու ապա հաւասար բաժանուս այդ գործով պարապողների մէջ գիւղական ժողովները։

Յաճախ արտելները կազմակերպւում են ձեռք բերելու միանւագ մեծ քանակութեամբ նիւթեր, որոնք անհրաժեշտ են այս կամ այն արհեստի համար Ահա—թէ ինչպէս են նկարագրում, օրինակ, Ուտեսովկի գիւղի (Սիմբիրսկի նահանգ) տակառագործի արտելը *)։

«Ուտեսովկի գիւղի տակառագործների իւրաքանչիւր արտելը բաղկացած է լինում 80 – 90 հոգուց. ամեն տարի կազմւում են մի քանի արտելներ։ Ընկերութեան իւրաքանչիւր անդամը մտցնում է արտելի դրամարկղը 200 ռուբ., իսկ ով չունի այդչափ միջոցներ, նա ծառայութեան է մտնում հարուստ տակառագործի մօտ 70—100 ռուբլի վարձատրութեամբ 10 ամսւայ աշխատանքի համար, բացի այդ գործատէրը տալիս է նրա ապրուստը և նիւթի համար անհրաժեշտ գումար։ Այս ձևով ժողովւում է 16—18 հազարի չափ մի դրամագլուխ, որը և արտելը գործադրում է տախտակներ գնելու համար. այդ նպատակով նրա հաւատարմատարները ճանապարհւում են Կազանի կամ Վեատկայի նահանգը և այնտեղ առնում են 150 կամ աւել դեսեատին անտառաբաժիններ։ Անտառը ձեռք բերելուց յետոյ, արտելը չէ դադարում իր գոյութիւնը պահպանելուց։ Փոխանակ ձեռք բերած անտառը բաժանելու իր անդամների մէջ. արտելը ամբողջ կազմով գնում է փայտ կտրելու պատրաստութիւնները տեսնելու, վարձում է բնակարան, հոգում է ընդհանուր ճաշի մասին, ընտրելով տնտեսութիւնը վարելու համար տնտեսներ։ Անտառը կտրում են ու տախտակներ պատրաստում։ Տակառագործներին պէտք են միայն կաղնու ծառերը, որոնք լինում են ամեն մի դեսեատինի վրայ մօտ 30—50 հատ. արտելը կտրում է կաղնու ծառերը, իսկ մնացած ծառերը ծախում է էժան գներով տեղական գիւղացիներին։

*) В. В. «Артельныя начинанія русскаго общества».

Ծախու են հանւում նաև կաղնու ծառից պատրաստւած տախտակներից վատ տեսակները, թողնելով իւրաքանչիւր տակառագործին մօտաւորապէս 400 հատ կիսատակառի համար անհրաժեշտ քանակութեամբ տախտակներ լաւ տեսակից. այդ տախտակները բեռնում են յատուկ այդ նպատակի համար գնւած նաւերի վրայ ու ապա ուղարկում Վոլգայի ափերին գտնւող քաղաքները՝ Սամարա, Սարատով, Խվալինսկ և այլն, որտեղ իրանք տակառագործներն էլ մնում են աշխատելու համար»։

Ի հարկէ, այսպիսի խոշոր արտելական ձեռնարկներ մեզ մօտ հազւագիւտ են. բայց մանր արտելներ համարեա կարելի է տեսնել ամեն մի գիւղում։ Այստեղ կան ատաղծագործների, որմնադիրների ու հող պեղողների արտելներ, որոնք միասին որոնում են աշխատանք դրսում և միասին էլ կատարում գործը։ Այստեղ կան քարհատների, կղրագործների ու ձկնորսների արտելներ, որոնք հէնց իրենց տեղում ձեռնամուխ են լինում փոքր ի շատէ խոշոր գործի, որը և միահամուռ այժերով վերջացնում են։ Այստեղ կան դարբինների, կաւագործների ու ջուլհակների արտելներ. սրանք ընդհանուր ջանքերով վարձում կամ շինում են այն առանձնայատուկ բնակարանները, որոնք անհրաժեշտ են լինում իրանց արհեստի համար։

Կարելի էր դեռ էլի օրինակներ բերել ուրիշ շատ ամենատեսակի արտելների, որոնք ապացուցանում են մեր ժողովրդի աշխատակցութեան, կոօպերացիայի մեծ ընդունակութիւնը։ Այնուամենայնիւ արտելը չը կարողացաւ ստեղծել այնպիսի լայնածաւալ ու զօրեղ կոօպերատիւ շարժում, որպիսին բռնկել է Արևմտեան Եւրոպայի քաքակիրթ պետութիւնների ժողովրդական մասսաները և որը տալիս է նրանց այնքան այժ ու մեծ բարիքներ։ Արտելը մնում է մի տեղական, փոքրիկ ձեռնարկ, որին ձեռնամուխ են լինում կարճ ժամանակւայ համար և որն խ-

կոյն և եթ քայքայւում է, հէնց որ վերանում է նրան ծնունդ տուող անխուսափելի պահանջը։ Ահա հէնց դրանումն է արտելի թոյլ կողմը, և նա այդպիսով անընդունակ է ստեղծելու գոբեղ կոօպերատիւ շարժում։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Եւ այսպէս այժմ մենք գիտենք, որ ռուս ժողովուրդը անտարակոյս հակւած է դէպի կոօպերացիան, որ ռուս հասարակութեան լաւագոյն մասը ջանքեր է գործ դրել, որպէսզի ծանօթացնի ժողովուրդը, թէ ինչ հիմունքների վրայ են դրւած կոօպերատիւ ձեռնարկները լուսաւորւած երկիրներում, ինչ տեսակ ընկերութիւններ են դրա համար կազմակերպւում. և չը նայած այդ բոլորին, դրանից ոչինչ դուրս չեկաւ։ Ինչու։ Ահա մի հարց, որին այժմ մենք կաշխատենք տալ կարճ պատասխան։

Ամենից առաջ կոօպերացիան կասաւոր հիմնարկութիւն է և ոչ թէ պարտադիր։ Կոօպերատիւ գործ սկսելու համար մարդիկ համախմբւում են առանց որևէ մէկի հարկադրութեան, այլ սոսկ գիտակցելով ձեռնարկի օգուտը, որին նրանք ձեռնամուխ են լինում և կամենում են ծառայել։ Բոլոր մասնակցողները, ուրեմն պէտք է օժտւած լինեն մրահաւասար հասարակական իրաւունքներով։ Հակառակ դէպքում, եթէ մի այդպիսի յօժար կամքով սկսւած ընկերական գործի մէջ մտնում է մի մարդ, որն ունի աւելի մեծ իրաւունքներ, քան միւս անդամները, նա, անշուշտ, իր իշխանութեան կ'ենթարկի բոլոր մնացեալ անդամներին։ Մարդիկ, կը դադարեն այդ ձեռնարկը իրենց գործը համարել. նրանք հետզհետէ սկսում են սառն վերաբերւել, և գործն ընկնում է։ Ահա թէ ինչու մի քանի գիւղատնտեսական կոմիտէներ բոլորովին արդարացի կերպով նկատել էին, որ կոօպերացիան չէ կարող զարգանալ սեր գիւղում, սինչեւ որ գիւղացիութեան իրաւունքները չը հաւասարւեն միւս դասերի իրաւունքներին։

Այդ միջոցը հանդիսանում է առաւել ևս անհրաժեշտ, որովհետև ժամանակակից գիւղացիութեան դրութիւնը զրկում է նրան ամեն ինքնուրոյնութիւնից ոչ միայն հասարակական, այլ և նոյնիսկ իր անձնական գործերում, չէ թողնում նրան արտայայտելու իր նախաձեռնութիւնը, չէ սովորեցնում նրան, որ նա ինքը հոգայ իր մասին։ Մեր գիւղատնտեսական կոմիտէները խիստ սուր կերպով են արտայայտել իրենց կարծիքը այդ մասին. «Գիւղացիութեան ինքնագործունէութիւնն ու նախաձեռնութիւնն արտայայտելու համար ասպարէզ չկայ,—գրում էր, օրինակ, գիւղացի Վոլկովը իր զեկուցման մէջ, որը ներկայացրել էր Կուրսկի նահանգի Սուջայի գաւառական կոմիտէին. գիւղացիները նոյնիսկ իրանց զուտ գիւղական գործերը կամ անձնական ստացւածքը կարգաւորելու, և կամ իրանց հողաբաժիններից օգտւելու մէջ ձեռք ու ոտքով կապւած են իշխանութեան խնամատարութեամբ. գիւղացու բարոյականութեան մասին անգամ հոգ են տանում պաշտօնական անձինք. էլ չենք ասում այնպիսի երևոյթների մասին ինչպէս՝ ընտանիքների բաժանումն է, ընտանիքի անդամների տնից հեռանալը, որոնք արդէն իսկ ենթակայ են հակողութեան։ Այսպիսի պայմաններում հիմք չկայ կարծելու, որ գիւղացու անհատականութիւնը կարող է ազատ զարգանալ, որ միևնոյն ժամանակ կաճի նաև նրա տնտեսական գործունէութիւնը... գիւղը գտնւում է կատարեալ աղքատութեան ու քայքայման—ճանապարհի վրա, իսկ նրա լաւագոյն ոյժերը փախուստ են տալիս գիւղից»։ «Միթէ կարող է լինել որևէ խթան ինքնուրոյն գործու-

նէութեան համար—ասած է Վեսատկայի նահանգի գործերի մէջ, – եթէ գիւղացին, թէպէտև, գուցէ, ոչ բոլորովին պարզօրէն է գիտակցում, բայց և այնպէս զգում է, որ ինքը գտնւում է փոքրիկ տնաս երեխայի դերի մէջ, որի համարեա իւրաքանչիւր քայլը ենթարկւած է բազմաթիւ մեծաւորների հսկողութեանը»։ «Պարոնայք, բացականչում էր խարկովցի կալւածատէր Գրիշենկօն, դրէք ձեզ մի րոպէ գիւղացու դրութեան մէջ. երևակայեցէք ձեզ, որ դուք ենթակայ էք, ասենք հէնց ձեր սեփական օգտի համար, նոյն խնամակալութեան, որին և գիւղացիներն են ենթարկւած, երևակայեցէք, որ ձեր իւրաքանչիւր քայլը ձեր անձնական կեանքի մէջ, որպէսզի օրինաւոր համարւի, անպատճառ պիտի արժանանայ որևէ իշխանաւորի բարեհայեցողութեանը, երևակայեցէք այդ ամենը, և դուք, անշուշտ, սառսուռ կը զգաք»...

Կարելի էր առաջ բերել դեռ շատ այս տեսակ կարծիքներ այնպիսի մարդկանց, որոնց ամբողջ կեանքը անց է կենում գիւղացիութեան մէջ կամ գիւղացիութեան հետ։ Նրանք ամենքը միաբերան կրկնում են, որ ժողովրդի մէջ չէ կարող լինել ինքնուրոյն գործունէութիւն, չէ կարող ժողովրդի մէջ զարգանալ հասարակական գործի նախաձեռնութեան ոգին, քանի որ գիւղում իշխում են այնպիսի կարգեր, որոնց ներկայումսնա ենթակայ է։ Իսկ չէ որ կօօպերացիայի զարգացման համար ամենից առաջ կարևոր է, որ ինքն ազգաբնակութիւնը լինի բաւականաչափ ինքնուրոյն ու նախաձեռնող։ Ամեն մի կօօպերատիւ ձեռնարկ այսպէս թէ այնպէս շօշափում է տեղական ունևոր մարդկանց շահերը։ Եթէ, օրինակ, բացւում է մի սպառողական խանութ, նրա մասնակցողների դէմ, մանաւանդ նրա նախաձեռնողների դէմ ոտքի են կանգնում բոլոր տեղական մանրավաճառները, որոնց գործերի յաջող ընթացքի մէջ յաճախ շահագրգռւած է և տեղական իշխանութիւնը։ Վարկի ընկերութեան դէմ աղմուկ կը բարձրացնեն վաշխառուները։ Այս կամ այն արտադրողական ընկերութիւնը յաճախ կարող է գործարանների ու արհեստանոցների տէրերին կամ վաշխառուներին դուր չը գալ։ Իսկ չէ որ դրանք ամենքն այնպիսի մարդիկ են, որոնք ունեն և կապիտալ, և ազդեցութիւն. դրանց համար շատ դիւրին է ամեն հալածանքի ենթարկել նրանց, ովքեր ձեռնամուխ են լինում մտցնել ժողովրդական մասսաների մէջ կօօպերատիւ ձեռնարկներ. շատ հեշտ է վախեցնել ոգէտ ազգաբնակութիւնը, հեշտ է ամեն տեսակ անհեթեթ լուրեր ու առասպելներ տարածել կօօպերացիային մասնակցողների մասին։ Այսպէս ուրեմն, կօօպերացիան կարիք ունի այնպիսի մարդկանց, որոնք ինքնուրոյն են ու նախաձեռնող, իսկ ժամանակակից ռուսական կեանքի կարգերը հիմնովին հակառակ են այդ տեսակ մարդկանց։ Ահա թէ ինչու մեր ժողովրդի մէջ այնքան քիչ են ինքնուրոյն ու նախաձեռնող մարդիկ։ Ահա թէ ինչու կօօպերացեան համարեա ոչ մի նշանակութիւն չունի մեր ժողովրդի կեանքի մէջ։

Դժւարին է մեր պայմաններում ձեռնամուխ լինել կօօպերատիւ գործին, դժւարին է նայած նրա շարունակելը ոչ միայն այն պատճառով, որ գիւղացիութիւնն իր իրաւասութեան մէջ չէ հաւասարւած միւս դասերի հետ, այլ և նրա համար, որ մեզանում ներկայումս առհասարակ չը կան համապատասխան պայմաններ լայն հասարակական գործունէութեան համար։ Կօօպերատիւ գործի, ինչպէս և իւրաքանչիւր հասարակական ձեռնարկի յաջողութեան համար պահանջւում է ժողովնիրի, խօսքի ու մամուլի ազատութիւն։ Միմիայն այդ պայմաններում կարող է կօօպերացիան ծաղկել։ Արդարև. ինչպէս կարող է զարգանալ կօօպերացիան, երբ նրա անդամներին ամեն րոպէ կարող են ցրել իրանց ժողովից, երբ նրանց ընկերութիւ-

նը ամեն օր կարող է փակել տեղական իշխանութեան քմահաճոյքով։ Ինչպէս կարող է կօօպերացիան յաջողութիւն ունենալ, երբ նրա ամեն մի նոր բաժանմունքը բացելիս ստիպված ես հազար ու մի նեղութիւն քաշել, որպէսզի թոյլտուութիւն ձեռք բերես զանազան խոշոր պաշտօնեաներից, որոնք յաճախ ապրում են հարիւրաւոր և հազարաւոր վերստ հեռու. երբ համարեա ամենափոքրիկ հնարաւորութիւն անգամ չկայ ազատ խօսելու ապագաբնակութեան հետ կօօպերացիայի օգտի ու նշանակութեան մասին. երբ մամուլին արգելված է արծարծել մի շարք ամենակարևոր հարցեր. երբ համապատասխան գրքերը ու բրօշիւրները, որոնք ընկնում են գիւղը կամ գործարանը, ոստիկանութիւնն անմիջատէս խլում է...

Բայց դեռ դա էլ քիչ է։ Մենք տեսանք, թէ որչափ հնչին դրամագլուխներ ունեն իրանց տրամադրութեան տակ մեր կօօպերատիւ ձեռնակները։ Իրերի այդ դրութիւնը բացատրւում է նրանով, որ ժողովրդական փողերը, որոնք գոյանում են հարկերից ու տուրքերից, մեր բիւրօկրատները գործադրում են աջակցելու համար խոշոր ձեռնարկներին՝ մեծ բանկերին, խոշոր գործարաններին կամ թանգ նստող երկաթուղու ճանապարհներին, իսկ մանր արդիւնաբերութիւնը, մանր հասարակական ձեռնարկները մեծ մասամբ զուրկ են այդ աջակցութիւնից։ Եւ դա հասկանալի է։ Կառավարութիւնը գտնւում է չինովնիկների ձեռքին, որոնք վաղուց արդէն կըտրուել են կենդանի կեանքից, վաղուց կորցրել են ժողովրդի իսկական շահերն ըմբռնելու ընդունակութիւնը... Համարեա նոյն բանը պէտք է կրկնել մեր զեմստվոների ու քաղաքային ինքնավարութիւնների վերաբերմամբ, որոնց, ղեկավարները, ճիշտ է, հանդիսանում են ազգաբնակութիւնից ընտրված ձայնաւորները, բայց այդ ընտրութիւնները գտնւում են այնքան անկանոն պայ-

մաններում, որ ժողովրդի իսկական ներկայացուցիչները համարեա թէ բոլորովին չեն ընկնում այդ հիմնարկութիւնների մէջ։ Հէնց այդ պատճառով էլ ոչ բիւրօկրատիան, ոչ էլ ժամանակակից քաղաքային ինքնավարութիւնները և զեմստվոյական հիմնարկութիւնները հոգ չեն տանում ինչպէս հարկն է կօօպերացիայի կարիքների մասին, գործ չեն դնում իրական ջանքեր ծաղկեցնելու կօօպերացիան։ Ուրեմն, որպէսզի կօօպերատիւ գործը ուղիղ ճանապարհի վրայ դրված լինի, անհրաժեշտ է, որ կառավարութիւնը և տեղական հաստատութիւնները դրեն ժողովրդից ընտրված իսկական ներկայացուցիչների ղեկավարութեան ներքոյ։ Իսկ այդ տեսակ ներկայացուցիչներ, որոնք ծանօթ են ժողովրդի իսկական կարիքներին ընդունակ են պաշտպանելու նրա շահերը, կը լինին միայն այն ժամանակ, երբ ընտրութիւնները կը կատարուեն ընդհանուր, ուղղակի, հաւասար եւ գաղտնի ձայնատուքեամբ։ Եւ միայն այդ պայմաններում կարող է նաև իսկապէս ապահովված լինել և ժողովների, խօսքի մամուլի ազատութիւնը, առանց որի, ինչպէս մենք տեսանք, չի կարող գոյութիւն ունենալ և կօօպերացիան։

Վերջապէս ժողովրդի տգիտութիւնը ևս հանդիսանում է մի անանցանելի խոչընդոտ կօօպերացիայի համար։ Եւ յիրաւի, միայն գրագէտ ազգաբնակութեան մէջ կարող են արագ տարածուել կանոնաւոր հայեացքներ կօօպերատիւ գործի վրայ, միայն լրագիրների, գրքերի ու բրօշիւրների օգնութեամբ կարելի է գրաւել կօօպերատիւ ձեռնարկների նոր կողմնակիցներ։

Անգրագէտ ազգաբնակութիւնը ոչ միայն չէ կարող ինչպէս հարկն է ծանօթանալ կօօպերատիւ գործի հետ, այլ և անկարող կը լինի գործին ձեռնարկել ու ապա վարել այն փոքր ի շատէ կանոնաւոր կերպով։ Այս կէտի վերաբերմամբ հիմնովին համաձայն են մեր ժողովրդի մէջ

եղած կոօպերատիւ ձեռնարկների բոլոր հետազօտողները։ «Արտելական գործի գլխաւոր խոչընդոտը—ասում է պ. Պրօկովիչը—կրթված մարդկանց պակասութիւնն էր գիւղում, որը դժւարացնում էր ձեռնարկի կանոնաւոր, ընկերական հիմունքների վրայ դնելը, հաշւապահութիւնը, վերահսկողութիւնը և այլն»... «Վերեշչագինի պանրագործական արտելներում, ասում է նոյն հեղինակը մի ուրիշ տեղում,—գրագէտ անձանց պակասութիւնն էր, որ հանդիսացաւ արտելական գործի անաջողութեան խոշոր պատճառներից մէկը. չը կային մարդիկ, որոնք կարող լինէին վարել արտելի հաշւէտւութիւնը և հսկել աւագների գործողութիւններին։ Պրոֆ. Օզերովը նոյն կերպով է բացատրում սպառողական ընկերութիւնների անբաւարար զարգացումը մեզ մօտ։ «Դրա պատճառները շատ են, գլխաւորում է նա, սակայն դրանցից գլխաւորը՝ մեր բանւորական ու գիւղացիական մասսայի զարգացման ստոր մակերևոյթն է, նրա համարեա թէ լիակատար անգրագիտութիւնն է։ Իրանք գիւղացիները և բանւորները սեփական ոյժերով միայն խիստ սակաւ դէպքերում կարող են հիմնել սպառողական ընկերութիւններ»...

Դժւար է երևակայել, թէ որպիսի անսպասելի խոչընդոտների ես հանդիպում, երբ նոր հայեացքների քարոզով դիմում ես ազգաբնակութեանը, որը զուրկ է կանոնաւոր դպրոցի, լաւ լրագրի կամ գրքի ազդեցութիւնից։ Հետևեալ օրինակը ցոյց է տալիս, որ այն պայմաններում, որոնց մէջ ապրում է այժմ մեր գիւղը, ոչ միայն կոօպերատիւ հաստատութիւնների կազմակերպումը, այլ և սոսկ տեղեկութիւններ նրանց մասին տարածելը կարող է տեղիք տալ չափազանց սխալ ու անհեթեթ մեկնութիւնների... Ահա թէ ինչ էր գրել «Русск. Вѣд.» օրաթերթի թղթակիցը Պոգոլի նահանգի Ուգլիցկի գաւառից.

«Ներկայ տարւայ սկզբում գաւառիս կալւածատէրերից մէկը, նախկին հաշտարար-միջնորդ Պ. Շչ. միտք է յղանում իր գիւղի գիւղացիների մէջ կազմելու վարկի ընկերութիւն, խնդրելով պետական բանկից փոխառութիւն հիմնական դրամագլխի համար։ Գիւղացիներին այդ նոր գործի հետ ծանօթացնելու նպատակով պ. Շչ. բաժանում է նրանց վարկի ընկերութեան տված կանոնադրութիւնից մի քանի օրինակ, որ ինքը ստացած է լինում պետական բանկի տեղական բաժանմունքից։ Այս անհնարն դէպքը, ապա և ժողովրդի մէջ վարկի ընկերութիւնների տարածելը, որոնց մէջ ասւած է, թէ պետական բանկը տալիս է այդ ընկերութիւններին պարտքով փող,—հիմք է դնում ինքնուրոյն շարժման։ Գիւղացիների մէջ լուր է տարածում, թէ գտնւած է մինչև այժմ գաղտնի պահւած մի օրէնք, որի համաձայն իւրաքանչիւր գիւղական հասարակութիւն, որ հիմնում է վարկի ընկերութիւն, ստանում է արքունիքից նիւթական նպաստ իր տնտեսութիւնը վարելու համար։ Մի քանի ուրիշ գիւղերում երևան են եկել դեռ աւելի ևս անհաւատալի պատմութիւններ։ Գիւղական իշխանութեան վերաբերմունքը դէպի նոր շարժումը առայժմ արտայայտւել է նրանով, որ հաշտարար միջնորդները արգելեցին վոլոստի վարչութիւններին հաստատելու գիւղացիների ստորագրութիւնները կանոնադրութիւնների և խնդիրների վրայ, որ տրւում էին ընկերութիւններ հիմնելու թոյլտւութիւն ստանալու համար. այդ հանգամանքից զրդւած գիւղացիները սկսեցին այդ դոկումենտները հաստատելու համար դիմել նօտարներին, մի բան, որ պահանջում է ծախսեր և ժամանակի աւելորդ վատնում։ Այդ հանգամանքի ազդեցութեան՝ տակ թաղցրած օրէնքի մասին տարածւած առասպելը ստանում է գիւղացիների աչքում իրական նշանակութիւն... Ներկայումս բոլոր փորձերը՝ համոզել գիւղացիներին դադարեցնել նոր ընկերութիւններ կազմե-

լը ու սպասել տրված խնդիրների պատասխանն ստանալուն՝ իրանց նպատակին չեն հասնում, և նրանք շարունակում են կազմել նորանոր ընկերութիւններ, ներկայացնելով խնդիրներ պետական բանկից փոխատուութիւն ըստանալու համար»...

Միթէ՞ հնարաւոր է այսպիսի պայմաններում ստեղծել ժողովրդի մէջ կանոնաւոր հայեացք կօոպերացիայի վրայ, և միթէ՞ արդարացի չենք մենք, երբ պնդումենք, որ կօոպերացիայի աջողութեան համար անհրաժեշտ է ընդհանուր կրթութիւն, խօսքի, մամուլի, ժողովների ազատութիւն։ Միայն այդ դէպքում նոր հայեացքները կը հեղեղեն զօրեղ հոսանքով ժողովրդական մասսաները, միայն այդ ժամանակ կը լուսաւորուի մեր խաւար ժողովրդի միտքը, նա ընդունակ կը լինի զանազանել իր իսկական բարեկամներին թշնամիներից, նա կը հասկանայ, թէ ում պիտի հաւատալ, ումից օգնութիւն սպասել, ում դիմել խորհուրդ հարցնելու։ Իսկ մինչև այդ օրը պէտք է դէն դնել ամեն մի յոյս, թէ ժողովուրդը կարող է գնահատել կօոպերատիւ գործը, ընդունակ կը լինի նրան ձեռնամուխ լինել, ինչպէս հարկն է, և ազատուել վաշխառուների, միջնորդների և զանազան նախաձեռնողների իշխանութիւնից, որոնք ապրում են նրա աշխատանքով և քայքայում նրա տնտեսութիւնը։

II

Սակայն նոյնիսկ այն կօոպերատիւ ձեռնարկները, որոնք մենք այստեղ աչքի առաջ ունէինք, այսինքն՝ արտեսական կօոպերացիաները, ոչ միայն բարձրացնում են ժողովրդի բարօրութիւնը, այլ և ներմուծում են բանուորների և գիւղացիների կեանքի մէջ շատ նոր սովորութիւններ և յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են մօտիկ ապագայում աւելի լաւ կեանք ստեղծելու համար։

Այսպէս, բոլոր նոյնանման կօոպերատիւ հասատատութիւնները սովորեցնում են ժողովրդական մասսաները ընդհանուր գործունէութեան, ցոյց են տալիս, թէ ինչպէս պէտք է ընդհանուր ջանքերով հասնել ընդհանուր նպատակների, հնարաւորութիւն են տալիս պարզ գաղափար, որ պէտք է կուռել՝ «ամենքը մէկի համար, մէկը ամենքի համար»։ Մի խօսքով, նոյն իսկ տնտեսական կօոպերացիան հանդիսանում է լաւ դպրոց, որտեղ ժողովրդական մասսաները ընտելանում են կանոնաւոր հասարակական գործունէութեան։

Այդ կողմից գնահատելի են մանաւանդ սպառողական խանութները։ Այս հիմնարկութիւնների հետ շփւում են գլխաւորապէս կանայք, իբրև տանտիրուհիներ։

Կինը, հետևաբար, սպառողական խանութների միջոցով հնարաւորութիւն է ստանում անմիջապէս մտնել մի հասարակական գործի մէջ այն ժամանակ, երբ հասարակական կեանքի միւս ասպարէզներում նրան յաջողւում է իրագործել այդ անհամեմատ աւելի քիչ չափով։

Բացի այդ, իրանց պարբերական մամուլի միջոցով և իրանց ընդհանուր ժողովներում, ուր տեղի են ունենում այնքան յաճախ տաք վիճաբանութիւններ, աշխատաւոր գիւղացիական մասսաները ծանօթանում են բազմաթիւ գործնական հարցերի հետ, որոնց պարզելը ամեն մէկին անհրաժեշտ է հէնց նրա համար, որպէսզի կարողանայ հասկանալ շրջապատող կեանքը։

Քննելով իրանց խանութները և արհեստանոցները եկող ապրանքների առաւելութիւններն ու պակասութիւնները, նրանք ակամայ հասու են լինում աշխատանքի պայմաններին, որոնց մէջ գտնւում են այդ ապրանքները արտադրող բանուորները, հաշուի են առնում գործա-

բանատէրերի ստացած արդիւնքը, հետամուտ են լինում այն տեղերին, ուր աւելի լաւ են պատրաստուում ապրանքները, որոշում են տեղական բնակիչների ճաշակն ու կարիքները և այլն, մի խօսքով, կօօպերատիւ ձեռնարկը ակամայ ստիպում է մտածել շատ այնպիսի բաների մասին, որոնց վրայ գիւղացին կամ բանւորը առանձնապէս ուշադրութիւն չէին դարձնել։

Իսկ գիտակցօրէն վերաբերուել իր կօօպերացիային՝ ստիպուած է ամեն մի անդամ հէնց նրա համար, որ քանի երկար է ապրում կօօպերացիան, այնքան էլ շատ է ենթարկում անդամներին իր պահանջներին, այնքան էլ աւելի խիստ է հետամուտ լինում, որ նրա բոլոր հրահանգները ճշտօրէն իրագործուեն։ Սկզբում կօօպերացիան հոգ է տանում սոսկ այն բանի մասին, որ ընթերցանութեամբ, գործնական փորձերով, տարածելով համապատասխան գրքեր ու բրոշիւրներ, նրա բոլոր անդամները ծանօթանան տնտեսութեան այն ձևերի հետ, որոնք հաճելի են կօօպերացիային։ Բայց հետզհետէ կօօպերացիան դադարում է միայն խորհուրդներ տալուց և սկսում է որոշ տնտեսական պահանջներ դնել. նա, օրինակի համար, ցոյց է տալիս, ինչպէս այդ տեղի է ունենում Դանիայում, ինչպիսի ձուեր պիտի ծախու հանել և ինչպիսի իւղ պիտի պատրաստել։ Այն անդամները, որոնք հրաժարուում են ենթարկուելու այդ ընդհանուր հրահանգներին, ստիպուած են կամ հեռանալ կօօպերացիայից կամ պատիժ կրել, տուգանք տալով։ Բայց կօօպերացիան այժմ արդէն հանդիսանում է մի ոյժ. նա չափազանց մեծ շահեր է բերում իւրաքանչիւր տնտեսին, որպէսզի նա համաձայնի թեթևամտօրէն խզել իր կապերը կօօպերացիայի հետ, որի հաւասար իրաւասու անդամ է ինքը, ինչպէս և մնացեալները. չէ՞ որ կօօպերացիայի հրահանգները մրշակւում են ընդհանուր ժողովներում, ուր նա հնարաւորութիւն ունի համոզելու իր ընկերներին այս կամ այն պահանջի օգուտի կամ վնասի մէջ։

Բայց դա էլ բաւական չէ։ Կօօպերացիան ձգտում է ոչ թէ լոկ առանձին հրահանգներ տալու տնտեսութեանը այս կամ այն ասպարէզում, այլ յաճախ իր համար նպատակ է դնում ենթարկելու իր հրահանգներին տնտեսութիւնը ամբողջապէս, որպէսզի առանձին մանր տնտեսութիւնների փոխարէն ստեղծի մի խոշորը, որը կարող է ներմուծել գիտութեան պահանջած բարւոքումները և կատարելագործութիւնները։ Այդ տեսակէտից ուշադրութեան արժանի է Գերմանիայի գինեգործների օրինակը։ Ընդամենը մի քանի տարի առաջ հարաւային Գերմանիայի խաղողի այգեպանները ընկել էին սոսկալի թշուառութեան մէջ։ Նրանք դրամագլուխ չունէին, որպէսզի կարողանային իրանք գինեգործութեամբ պարապեն, ուստի և հարկադրւած էին ծախելու իրանց խաղողը, հէնց որ նա հասնում էր՝ ամենաէժան գներով։ Ժողովուրդը խիստ տառապում էր և ստիպւած էր որոնելու նոր հողեր։ Բայց ահա առաջ է գալիս գինեգործարանի կօօպերացիան, որը սկսում է ինքը գինի պատրաստել։

Որպէսզի գործի յաջողութիւնը ապահովւած լինի, կօօպերացիան իր անդամների բոլոր տնտեսութիւնները ենթարկեց որոշ միատեսակ պահանջների։ Այսպէս, իւրաքանչիւր այգու դիրքի համեմատ որոշւում է հողը պարարտացնելու տեսակն ու ձևը. ամբողջ խաղողը պէտք է ժողովել կօօպերացիայի նշանակած օրերին և դնել նրա տրամադրութեան տակ. ապա գինին հմուտ ղեկավարների ձեռքով ենթարկւում է խմորման կօօպերացիայի սեփական մառաններում։ Կօօպերացիայի մէջ մտնելու պայմանները դարձրած են դիւրին ու մատչելի ամեն մէկ չքաւորի համար։ Վերջապէս, որպէսզի ազատեն վերջնական քայքայումից իրանց անդամներից ամենաչքաւորներին,

կոօպերացիան որոշում է գնել նրանց կալուածները և ապա կապալով տալ հէնց իրանց տէրերին, իրաւունք տալով պարբերական հատուցումներով ծածկել վճարը։ Նմանօրինակ կոօպերացիաներ, որոնք իրանց ձեռքն են առնում բոլոր անդամներին ղեկավարելը և ստորադրում են նրանց իրանց հրահանգներին ի շահ ընդհանուրի, արդէն քիչ չեն։ Դրանց օրինակից կարելի է մասամբ տեսնել, թէ ապագայում ինչ կերպարանք կընդունի ամբողջ մարդկութեան տնտեսութիւնը։

Մտնելով կոօպերացիայի մէջ, մարդ միևնոյն ժամանակ կապ է հաստատում ոչ միայն իր մօտակայ հարևանների այլ և իր ապրած ամբողջ պետութեան լայն խաւերի հետ։ Բանը նրանումն է, որ մի քանի մանր կոօպերացիաներ իրանց համար շահաւէտ են համարում միանալ իրար հետ, որպէսզի հնարաւորութիւն ունենան մատուցանելու փոխադարձաբար ամեն տեսակ ծառայութիւն ու աջակցութիւն։ Իսկ այս մանր միութիւնները կազմում են էլի աւելի խոշոր միութիւններ, որոնց մէջ մտնում են այդպիսով այս կամ այն պետութեան համարեա բոլոր ծայրերից կոօպերատիւ ընկերութիւնները։ Այսպէս, օրինակ, Անգլիայում մի կոօպերատիւ միութեան մէջ կան մօտաւորապէս 1500 կոօպերատիւ ընկերութիւններ և մօտ 2 միլլիոն անդամ։

Ինքն ըստինքեան պարզ է, որ այդ տեսակ միութիւնները մեծ ազդեցութիւն ունեն պետութեան վրայ, որ հասարակութիւնը ականջ է դնում նրա ձայնին, որ օրէնսդրութիւնը հաշուի է առնում նրա ցուցմունքները։ Եւ, արդարև, կոօպերատիւ ընկերութիւնների ազդեցութիւնը՝ ապրանքների կեղծման կամ չափ ու կշռի, կամ գործարանական դրօշմներին վերաբերող օրէնքների վրայ՝ կարող է լինել շատ մեծ։

Նոյն կոօպերատիւ ընկերութիւնները մատուցանում

են աշխատաւոր մասսային էլի մի ուրիշ ծառայութիւն։ Չէ որ սպառողական խանութների ու մագազինների մեծ մասի անդամները իրանք բանւորներն են։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իւրաքանչիւր մագազին, իւրաքանչիւր խանութ ձգտում է առնելու աւելի լաւ ու էժան ապրանք, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ձեռք բերելու մեծ քանակութեամբ գնողներ, մատակարարելով նրանց լաւորակ ապրանք չափաւոր գներով։ Բայց, թերևս առարկեն, որ եթէ սպառողական խանութները նշանակեն էժան գներ, չէ որ դա կազդի բանւորների գործարաններից ստացած աշխատավարձի վրայ, որքան էժան ծախի գործարանատէրը, այնքան էլ պակաս աշխատավարձ կը տայ բանւորներին։ Դուրս է գալիս, ուրեմն, որ այն արդիւնքը, որ բանւոր ազգաբնակութիւնը ստանում է սպառողական խանութներից, կարծես թէ, ինքը գողանում է իր սեփական գրպանից։ Հետևաբար և այդպիսի սպառողական կոօպերացիայից ստացած օգուտը կարծես թէ առեղծուածային է։ Բայց բանւորները վաղուց արդէն ուշադրութիւն են դարձրել գործի այդ կողմի վրայ և դրա համար էլ նախ քան իրանց խանութների ապրանքների գների նշանակելը, մեծ խնամքով քննում են, թէ ինչ պայմաններում է պատրաստուում այս կամ այն ապրանքը։ Քիչ չէ պատահում, որ կոօպերատիւ խանութները որոշում են կայացնում չը գնել այս ինչ գործարանից կամ արհեստանոցից ապրանք, որովհետև այդտեղ չափազանց անարդար են վերաբերուում դէպի բանւորները և կեղեքում են նրանց։ Այստեղից պարզ է, որ կոօպերատիւ ձեռնարկների միջոցով բանւորները, որոնք նոյնպէս միութիւններ են կազմում, միայն աւելացնում են իրանց ոյժերը։

Բայց նրանք շատացնում են իրանց ոյժը ոչ միայն նրանով, որ կոօպերացիաներում ժողովրդական մասսանե-

ը դաստիարակում են հասարակական լայն գործունէութեան համար, և որ բանուորական միութիւնները կարող են յենուել կոօպերատորների աջակցութեան վրայ, այլ և նրանով, որ գոնէ սպառողական կոօպերատիւ ընկերութիւնները խնայում են մեծ միջոցներ, որոնք առանց սպառողական ընկերութիւնների կընկնէին վաճառականի կամ գործարանատիրոջ գրպանը։ Այսպիսով աճում է հասարակական կապիտալը, որը բանուորական մասսաները կարող են գործադրել իրանց նպատակներին հասնելու համար։ Այդ միջոցներից կազմուում են բանուորական գրբամարկղներ, որտեղից նպաստ է տրուում գործադուլաւորներին. այդ միջոցներով հիմնում են դպրոցներ ու գրադարաններ և այլն,—մի խօսքով բարւոքւում է բանուոր դասակարգի կեանքը։

Չէ կարելի լռութեամբ անցնել և այն, որ լայնածաւալ կոօպերացիաներում, որոնք այժմ գոյութիւն ունեն Արևմտեան Եւրօպայի շատ պետութիւնների մէջ, պատրաստուում են գործիչներ, որոնք սիրով գործ են դնում իրանց ժամանակն ու ընդունակութիւնները յօգուտ ժողովրդական մասսաների։ Եւ դրանով առաւել ևս աճում է ժողովրդի ոյժը, որը ձգտում է դէպի լաւագոյն ապագան։

Սակայն, երբ մենք խօսում ենք կոօպերացիայի մասին, երբ մենք մատնանիշ ենք անում նրա ահագին նշանակութեան վրայ ժողովրդի կեանքի մէջ, երբ մենք դարձնում ենք ընթերցողի ուշադրութիւնը այն բարիքների վրայ, որ նա տալիս է բանուոր մարդուն,—մենք չենք մոռանում որ ոչ բոլոր տնտեսական կոօպերացիաները հաւասար չափով շահաւէտ են աշխատաւորների համար։ Ամենից առաջ անհրաժեշտ է զանազանել արտադրող կոօպերացիաները սպառողական կոօպերացիաներից։ Սպառողական կոօպերացիաները, որոնց միջոցով կոօպերացիայի մասնակցողները ձգտում են ազատուել վաճառականի միջնորդութիւնից ու ձեռք բերել ապրանքները ըստ հնարաւորութեան անմիջական աղբիւրներից, ցոյց են տուել իրանց օգտակարութիւնը բոլոր պայմաններում. նրանք հաւասար չափով օգտակար են թէ քաղաքում և թէ գիւղում, եթէ միայն կեանքը, ինչպէս մենք ցոյց տուինք, դրուած է նորմալ պայմանների մէջ։

Այդպէս չեն արտադրող կոօպերացիաները. դրանք ամենն տեղ չեն լինում հաւասարապէս օգտաւէտ։ Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ դրանք մեծ յաջողութիւն ունեն գիւղում. այստեղ լաւ զարգանում են իւղագործական կոօպերացիաները, կոօպերատիւ ջրաղացները, կոօպերացիաներ, որոնք ձուից արհեստական միջոցով ճուտեր են հանում և նոյն իսկ ամբողջ կոօպերատիւ տնտեսութիւններ։ Այսպէս ուրեմն արտադրող կոօպերացիաները գիւղում նւաճում են հետզհետէ աւելի ընդարձակ շրջաններ երկրագործական տնտեսութեան մէջ։ Ուրիշ կերպ է քաղաքներում. այստեղ արտադրող կոօպերացիաները միշտ կաղում են։ Այսպէս, օրինակ, հէնց նոյն Անգլիայում, ուր սպառողական ընկերութիւններն այնքան փառահեղ կերպով ծաղկել են, արտադրող կոօպերացիաները հազիւ հազ են քարշ տալիս իրանց գոյութիւնը։ Ներկայումս դրանց թիւը հասնում է 865 ձեռնարկի 30,104 անդամով, մինչդեռ Անգլիայի բոլոր բանուորների թիւը հասնում է չորս միլիոն հոգու։

Այդ երևոյթի պատճառները պարզ են։ Երկրագործական փոքրիկ տնտեսութիւնը կարող է գործի ձեռնարկել շատ չնչին դրամագլխով. մինչդեռ քաղաքում փոքր ի շատէ մեծ գործ սկսելու համար անհրաժեշտ է ունենալ խոշոր միջոցներ, իսկ որովհետև արդիւնաբերող կոօպերացիաների մեծ մասը բաղկացած է լինում չքաւորներից, ուստի հարկադրուած են լինում պարտք անել, վճարելով

յաճախ ահագին տոկոս, և այդպիսով հէնց սկզբից գործը դրւում է աննպաստ պայմանների մէջ։ Նոյն անհրաժեշտութիւնը՝ դրամագլուխ ձեռք բերել կողմնակի մարդկանցից՝ այն հետևանքն է ունենում, որ գործի մէջ են մրտնում նաև կապիտալիստները, որոնք իրանք չեն աշխատում։ Ահա թէ ինչու այդպիսի արդիւնաբերող կօօպերացիաները յաճախ հրաւիրում են վարձու բանւորներ։ Ֆըրանսիայում, օրինակ, կայ ակնոցներ պատրաստող գործարանատէրերի ընկերութիւն, որին սկզբում կարող էին մասնակցել միայն նրանք, որոնք համաձայնում էին անձամբ աշխատել, իսկ այժմ նա ունի 1200 վարձու բանւոր։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ դա արդէն կօօպերացիա չէ, այլ մի սովորական արդիւնաբերական ձեռնարկ իր բոլոր պակասութիւններով։ Եւ, յիրաւի, այդ ընկերութեան մասին գրում են՝ «նա վարւում է բանւորների հետ աւելի անգթօրէն, քան որևէ մի այլ ընկերութիւն... ընկերութեան դիրեկտորները ուրիշ նպատակ չունեն, բայց միայն՝ ամենագազրելի կերպով կեղեքել բանւորներին... վերջիններս նայում են նրանց և ընկերութեան բոլոր անդամների վրայ որպէս «խոզէյիններ» վրայ և այն էլ վատ խոզէյիններ, վերաբերւելով նրանց մեծ անվստահութեամբ»...

Բացի այդ, արտադրող գիւղատնտեսական կօօպերացիաներում աւելի դիւրին է ենթարկել մասնակցողներին որոշ կարգ-կանոնի, որովհետև իւրաքանչիւր պահանջ արդիւնք է բնական պայմանների, որոնք ըմբռնելի են ամեն մէկին։ Այլ բան է արդիւնագործութեան մէջ, որտեղ ընդհանուր կարգապահութիւնը աւելի կախւած է անհատից, ուստի և աւելի շատ են լինում անբաւականութիւններ ղեկավարների դէմ։ Ղեկավարներին չը հնազանդւելը, այսինքն՝ ընդհանուր դիսցիպլինի բացակայութիւնը յաճախ պատճառ է դառնում արդիւնագործական արտադրող

կօօպերացիաների քայքայման։ Հետևաբար արդիւնաբերութեան ներկայ պայմաններում մենք չը պէտք է յոյս տածենք, որ արտադրող կօօպերացիան մեծ առաջադիմութիւն կանի գործարանական գործունէութեան ասպարէզում։

Ահա այն առաջին սահմանը, որ կեանքը դնում է տնտեսական կօօպերացիայի զարգացմանը։ Բայց դա դեռ բոլորը չէ։ Նոյն տնտեսական կօօպերացիաների փորձառութիւնից երևում է, որ այդպիսի աշխատակցութեան շատ քիչ են յարմարւած ինչպէս շատ հարուստները, այնպէս և ծայրայեղ չքաւորները, որոնք յաճախ վաղուց արդէն մոռացութեան են տւել ամեն մի տնտեսութիւն։ Ուրեմն, չէ կարելի յուսալ, որ կօօպերացիայի միջոցով, այսինքն՝ յօժարակամ համաձայնութեան ճանապարհով, կարող են բաւարարութիւն ստանալ հասարակութեան բոլոր կարիքները։ Իսկ չէ՞ որ այդ կարիքների մէջ կան այնպիսիները, որոնք ստիպողական են, ուստի և անկարելի է յետաձգել նրանց բաւարարութիւն տալը. օրինակ, ապահովել քաղաքին ջուր մատակարարելը, լուսաւորութիւն տալը, կամ մաքրել փողոցների ու տների աղբը, որից առաջ են գալիս զանազան վարակիչ հիւանդութիւններ, կամ ուսումնարաններ ու գրադարաններ հիմնելը և այլն։ Այս ամենը այնպիսի անյետաձգելի կարիքներ են, որ անհնարին է մատնել յօժարակամ համաձայնութիւնների պատահականութիւններին, այս ամենը պէտք է իրագործւի, եթէ հասարակութիւնը կամենում է ծաղկել ու զարգանալ,—ստիպողական կարգով, պետութեան ձեռքով։ Ուրեմն, կայ մի շարք ձեռնարկներ, որոնք չեն կարող ենթակայ լինել կօօպերացիային, յօժարակամ համաձայնութեան։ Կարելի էր առաջ բերել դեռ էլի մի քանի օրինակ, երբ կօօպերացիայի միջոցով չէ յաջողւում բաւարարութիւն տալ կեանքի բոլոր պահանջներին

սակայն վերևում բերուածներն էլ բաւական են։

Եթէ հաշուի առնելու լինենք այն բոլոր դէպքերը, երբ կօօպերացիան զուրկ է ազդեցութիւնից, այնուամենայնիւ էլի մնում է նրա համար մեծ, կարելի է ասել, գործունէութեան անհուն ասպարէզ։ Եւ արդարև, վերցնենք թէկուզ Անգլիայի սպառողական կօօպերացիաները, որոնցով այնքան պարծենում է այդ երկրի բանւոր ազգաբնակութիւնը։ Նիրկայումս այդ կօօպերացիաները, որ գլխաւորապէս գործում են բանւորների մէջ, ծախում են տարեկան 350 միլլիոն ռուբլու ապրանք։ Մինչդեռ Անգլիայում բանւորները ստանում են տարեկան 5 միլլիարդ ռուբլու չափ աշխատավարձ։ Այդ գումարից մօտ մի միլլիարդ ռուբլի ծախւում է բնակարանի վարձի, գազի, ջրի և տուրքերի վրայ, մօտ 700 միլլիոն ռուբլի վատնւում է խմիչքների վրայ, և որովհետև կօօպերատօրները չեն համաձայնում գինեվաճառութեամբ զբաղւել, ուստի այդ փողն էլ կօօպերացիաների ձեռքը չի ընկնում։ Մնում է, հետևաբար, մօտ 3 1/2 միլլիարդ ռուբլի, որ ծախսում է բանւոր դասակարգը սովորական կենցաղի անհրաժեշտ պիտոյքների համար, ասել է թէ, կօօպերատիւ առևտուրը նոյնիսկ Անգլիայում կարող էր դեռ մի 10 անգամ էլ մեծանալ։ Որքան խոշոր օգուտներ, որչափ մեծ ոյժ է տալիս բանւոր դասակարգին նոյնիսկ Անգլիայում կօօպերատիւ շարժման այդպիսի հսկայական աճումը։

Իսկ չէ՞ որ կօօպերացիան պատրաստում է մարդկութիւնը նոր կեանքի համար, ցոյց է տալիս կուի նոր միջոցներ, դնում է նրա առաջ նոր նպատակներ։ Եւ եթէ այժմ արդէն զգացւում է կօօպերացիայի բարերար ազդեցութիւնը մարդկութեան կեանքի վրայ, ապա որքան խոշոր պիտի լինի նրա ազդեցութիւնը ապագայում, երբ նա լայն ծաւալ կը ստանայ, երբ նա ճանապարհ բաց կանի ամեն տեղ, ուր միայն հնարաւոր է։

Երբ լրջօրէն մտածում ես կօօպերացիայի ապագայի մասին, ակամայ յիշում ես Ջոն Բրայտի ազնիւ խօսքերը։

Նա ասել է՝ «ես հաւատում եմ, որ ազիտութիւնն ու տանջանքները կարող են պակասել ու հասնել ամենաչնչին չափերի. որ երևան կը գան շատ բարեբեր անկիւններ, ծաղկած ու հարուստ պտուղներով այն ընդարձակ անապատում, որ ձգւած է մեր առջև»։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-ի ԳԱ СССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

Арм.
3-2719

Լույս են տեսել

1. Բախ.—Հարուստներ և աղքատներ II տպագ. 15 կոպ.
2. Պեշէխոնով.—Հաց, լույս և ազատութիւն . 12 »
3. Փէղոբովիչ.—Ինչպէս են ժողովում և ծախսում ժողովրդական փողերը . . . 5 »
4. Կարմելիւկ.—Նոր լեռան քարոզը . . . 2 »
5. Զերնով.—Գիւղացին և բանւորը . . . 15 »
6. Պերներստորֆեր.—Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան . . . 5 »
7. Պրամպոլինի.—Գիւղացիներին . . . . 5 »
8. Ն. Թոփչեան.—Արհեստակց. միութիւններ 15 »
9. Նովոտորժսկի.—Ի՞նչ է իրաւական պետութ. 15 »
10. Ն. Կաբանով.—Հողային հարցը նոր Զելանդիայում . . . . . 2 »
11. Ժան Ժորէս.—Բուրժուական սեփականութիւն և նրա ապագայ զրաւումը . . . 5 »
12. Ա. Աբեղեան.—Դեմոկրատ. ընտրութիւններ 12 »
13. Կարլ Կաուտսկի. — Ազգութիւնների հարցը Ռուսաստանում: . . . . . 3 »
14. Ա. Անարոնեան (Ղարիբ).—Ազատութեան ճանապարհին: . . . . . 80 »
15. Փ. Լասալ—Սահմանադրութեան էութեան մասին: . . . . . 5 »
16. Ա. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հող. հարցը 12
17 Վասիլիյ Գոլուբեվ—Ինչ է ժողովրդապետութիւնը. . . . . 2 »
18 Ս. Զատարեան.—Վիճակագ. տեղ. գիւղ. ազգաբ. 25 »
19. Ալֆոնս Դիւնան.—Ժողովրդական օրէնսդրութիւնը Դաշնակ. Զուիցերիայում . . . . 20 »
20. Դիկշտէյն.—Ով ինչով է ապրում . . . 7 «
21. Ն. Լ.—Մի զրոյց հողի մասին . . . . 5 »
22. Լ. Շիշկո—Ագրարային ծրագրի հարցը և գիտական սոցիալիզմի տեսութիւնը: . . . 7 »
23. Ա. Սիկոլաեվ.—Կոոպերացիա. . . . 15 »

Տպագրւում են եւ շուտով լոյս կտեսնեն

1. Վշոսէկ.—Պետական կազմութեան հիմքերը արևմուտքում:
2. Նովոտորժսկի—Ազգային հարց. Աֆոնոմիա և Ֆեդերացիա:

Պատրաստւում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր: